

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ


ԻՆՉ ՏՎԵՑ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ  
ԱԾԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԾՏ ● 1938 ● ՅԵՐԵՎԱՆ

2004

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԻՆՉ ՏՎԵՑ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ



Վոչ հեռու ապագայում Սորհրդային Միության ամբողջ ժողովուրդը, տղամարդիկ և կանայք, սկսած 18 տարեկան հասակից, հավասար, ուղղակի ընտրություններով, գաղտնի քվեարկությամբ ընտրելու յե իր ներկայացուցիչները ԽՍՀՄ Գերագույն Սորհրդում:

Ինչոր հանրապետություններում, յերկրներում և մարզերում այժմ ծավալվել է նախընտրական կամպանիան: Շուտով սկսվելու յեն Գերագույն Սորհրդի պատգամավորության թեկնածուների առաջադրումը և քննարկումը, Սորհրդային Միության ժողովուրդների առաջ գրված քաղաքական և սոստեսական պրորբեմների քննարկումը, մասսաների խիստ քննադատությանը կենթարկվեն իշխանության վատ աշխատող որդանները և խորհուրդների անպետք աշխատողները: Պետք է յենթադրել, վոր մի շարք դեպքերում մենք կունենանք հակախորհրդային տարրերի յելույթներ:

Ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ ընտրություններն ե՛լ ավելի կամրացնեն խորհրդային սոցիալիստական իրավակարգը:

Նախընտրական ժողովներում միլիոնավոր ընտրողներ խորհրդային յերկրի անցած ուղու հանրագումարը կտան:

Իսկ ի՞նչ է սվել խորհրդային իշխանությունը ԽՍՀՄ ժողովուրդներին իր քսանամյա գոյության ընթացքում: Ի՞նչ են ձեռք բերել խորհրդային իրավակարգի որով Սորհրդային Միության ժողովուրդները: Ավելի ճիշտ՝ ի՞նչ են ձեռք բերել Սորհրդային Միության ժողովուրդներն իշխանության խորհրդային ձևի որով՝ կոմունիստական կուսակցության ղեկավարության ներքո:

Քսան տարին մարդկային կյանքի համար փոքր ժամանակամիջոց չէ: Սակայն սետության համար, նրա զարգացման համար այդ շատ քիչ է, քանի վոր ժողովրդի զարգացումը շատ ավելի դանդաղ է ընթանում, քան առանձին մարդու զարգացումը:

Յեթե մենք հայացք գցենք Յեվրոպայի և Ամերիկայի ամենից ավելի կուլտուրական ժողովուրդների զարգացման վրա, ապա կատենենք, թե վորքան դանդաղ է ընթանում այդ զարգացումը և

11-2847391

М. П. КАЛИНИН

ЧТО ДАЛА  
СОВЕТСКАЯ ВЛАСТЬ  
ТРУДЯЩИМСЯ

Армпартиздат, Ереван, 1938



այն ել նա վոչ միչտ ե առաջ ընթանում: Պատմության մեջ քիչ ղեպքեր չեն յեղել, յերբ ամբողջ ժողովուրդներ ղեզրադացիայի յեն յենթարկվել, իսկ յերբեմն ել պատմության ասպարեղից լիովին անհետացել են: Բայնական ե ասել, վոր Չինաստանը մի ժամանակ համարվում եր աշխարհի ամենակուլտուրական պետութիւններից մեկը: Իսկ այժմ: Այժմ Չինաստանը թեպետ ե ունի հսկայական տերիտորիա բազմամիլիոն բնակչութեամբ,—այնուամենայնիվ նա հետամնաց յերկիր ե, վորին իմպերիալիստական դիւշատիչները շահագործում են շահվելու նպատակով ե պատառպատառ են անում: Ժողովրդի ուղին հետադուրեւ համար հարկավոր ե դիտենալ նրա սկզբնական դրութիւնը:

Յեւ անա այդպես ուրեմն, ի՞նչ տվեց խորհրդային իշխանութիւնը ԽՍՀՄ ժողովուրդներին: Յես կարծում եմ, գլխավորը, վճռողականը ե հիմնականը, վոր տվեց խորհրդային իշխանութիւնը ժողովրդին—այդ այն ե, վոր Խորհրդային Միութեան ժողովուրդները, սկսած ամենամեծերից մինչև ամենափոքրաթիւները, վորոնք վոչ հեռավոր անցյալում յեղել են ծեծկված ու շահագործված, այժմ դարձել են իրենց սեփական բարորութեան տերը: Նրանք հնարավորութիւն են ստացել կուրու իրենց սեփական բախտը: Ձախջախված ու վոչնչացված են շահագործող դատակարգերը ե նրանց հետ միասին վոչնչացված են ճգնաժամերը, դործազրկութիւնը, չքավորութիւնը ե մասսաների քայքայումը, վերացված ե մարդուն մարդու ձեռքով շահագործելու հնարավորութիւնը: Կոլտնտեսային գյուղացիութիւնը վոչ միայն ազատված ե կուլակների ե կարվածատերերի շահագործումից, այլ ապահովված ե հողով ե ժամանակակից տեխնիկայով: Հին Ռուսաստանը «ժողովուրդների բանտ» եր, իսկ ԽՍՀՄ՝ ժողովուրդների բարեկամութեան յերկիր:

Այս բոլորը մի՞թե չի վկայում այն մասին, վոր ԽՍՀՄ բանավորները ե գյուղացիները իրենց բախտի միակ տերերն են հանդիսանում: Յեւ վոչ վոքի չի հաջողվի խել այդ բախտը: Խորհուրդներ Յերկրի ամբողջ ժողովուրդը, մեծից մինչև փոքրը, իր բոլոր ուժերը կտա խորհրդային հողի անձեռնմխելիութեան համար, լենինի—Ստալինի դործի համար, կոմունիզմի հաղթանակի համար: Խորհրդային Միութեան ժողովուրդներն իրենց բախտը պահում են իրենց սեփական ձեռքերում: Նրանց յեռանդից, կամքից, հաստատակամութիւնից, աշխատունակութիւնից ե աշխատանքում ցուցաբերվող համառութիւնից ե կախված նրանց

կյանքի նյութական ապահովութիւնը ե կուլտուրական մակարդակի բարձրացումը:

Սա մեծ բարիք ե: Յերկրագնդի ե վոչ մի ժողովուրդ չունի այդ հնարավորութիւնը: Նա զրկված ե դրանից, նա կաշկանդված ե կապիտալիստական տիրապետութեան շղթաներով, նա կապիտալիստական հասարակութեան ստրուկն ե ե զրկված ե իր նյութական մակարդակի ե կուլտուրական զարգացման եյական փոփոխութիւնների վրա ազդելու հնարավորութիւնից:

Խորհրդային միութեան բանվորները, գյուղացիները ե աշխատավոր ինտելեկտեցիայի նվաճումները նրանով ել հենց նշանակալից են, վոր արդիւնք են նրանց համատեղ աշխատանքի: Կուրեկտիվ աշխատանքը, շատացնելով Խորհրդային Միութեան հարուստութիւնները, միևնույն ժամանակ բարվոքում ե նաև ամեն մի առանձին մարդու բարեկեցութիւնը:

Անհատական ե կուրեկտիվ շահի այդ զուգորդումը, ամեն մի մարդու՝ իր ուժերը լիովին դործադրելու այդ հնարավորութիւնը—Խորհրդային Միութեան ամենահսկայական նվաճումն ե:

## ԻՆՉ ՁԵՌՔ ԲԵՐԻՆ ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Ռուսական բանվոր դասակարգը, համեմատած յեվրոպական բանվորների հետ, ունի սոցիալիզմի դործի համար մղած պայքարի վոչ յերկար, բայց փառապանծ պատմութիւն: Կապիտալիստական եկոնոմիկայի զարգացումը Ռուսաստանում ընթանում եր ավելի դանդաղ տեմպերով, քան բանվորական շարժման զարգացումը:

Այդ համեմատաբար այնքան ել վաղուց չեր: Յես անսել եմ այն ժամանակը, յերբ աշխատանքը դործարանում սկսվում եր առավոտյան ժամի 6-ն անց 30 րոպեյին ե վերջանում եր յերեկոյան ժամի 6-ին՝ ճաշի համար մեկ ու կես ժամ ընդմիջումով: Փարբիկաններում աշխատանքը սկսվում եր առավոտյան ժամի 5-ին ե վերջանում եր յերեկոյան ժամի 8-ին՝ ճաշի ե նախաճաշի համար 2 ժամ ընդմիջումով: Բանվորները մեծ մասամբ ապրում եյին բարակի տիպի հանրակացարաններում:

Գործարանային կառավարչութեան կամայականութեան դեմ յեղած բողոքները շատ ղեպքերում անկազմակերպ բնույթ եյին կրում ե հաճախ արտահայտվում եյին վարպետներին ծեծելով: Յերբեմն վարպետների գլուխներին տոպրակ եյին

հազցնում և ձեռնասայլակով գործարանի դարբասից դուրս տանում: Վարպետներին ծեծելուն մասնակցող մարդկանց բանվորները զնահատում ելին, վորպես գոյություն ունեցող ճնշման և վարպետի անձնական կամայականության դեմ քաջ բողոքողներ: Հասարակական գլխավոր վայրերը, վորտեղ հավաքվում էին բանվորները, գարեջրատները, պանդոկներն էլին:

Բանվորի կյանքը ծայր աստիճան հասարակ էր. ուժասպառիչ յերկար բանվորական օրը և բնակարանային վատ պայմաններն էլին ուռևական բանվորի բաժինը: Բանվորները համարյա ամբողջ ազատ ժամանակը ստիպված էին անցկացնել պանդոկներում, գարեջրատներում և թեյարաններում: Բանվորի աշխատավարձը այնքան ցածր էր, վոր հազիվ էր բավականացնում բանվորի ընտանիքի կիսամուրացիկ գոյությունը պահպանելու համար: Մոսկվայի Պրոխորովսկայա մանուֆակտուրայում, վորտեղ աշխատավարձն ամենից ավելի բարձր էր, այն միջին հաշվով հավասար էր ամսական 20 ռուբլի 50 կոպեկի: Այն ժամանակ համարյա ամեն մի ձեռնարկության մեջ կիրառվում էր տուգանքների ծաղրող սխտեմը: Նույն Պրոխորովսկայա մանուֆակտուրայում բանվորներին տուգանում էին՝

անկարգության համար՝ 50 կոպ.

տունց գրասենյակի զխուության իրեն մոտ վորևե մեկին գիչերելու թողնելու համար՝ 50 կոպ.

ներքևի դարբասն անցնելու համար՝ 50 կոպ.

բակից բացակայելու համար՝ 50 կոպ.

ժամանակից շուտ վեր կենալու համար՝ 50 կոպ.:

Մի քանի «աստվածապաշտ» գործարանատերեր տուգանում էին բանվորներին նաև «յեկեղեցի չդնալու համար»:

Վարպետների վերաբերմունքը դեպի բանվորները համարյա նահապետական բնույթ էր կրում: Այս կամ այն վարպետի մոտ աշխատում էին մի գյուղի բանվորներ: Կային ամբողջ սրահատանոցներ, վորտեղ աշխատում էին մի գյուղի մարդիկ: Յերբ գյուղից նոր աշխատող էր գալիս, հայրենակիցները տեղափոխում էին նրան գործարանում կամ արհեստանոցում, հասկանալի յե, «սիրաչահելով» իրենց համագյուղացի վարպետին համապատասխան վարձատրությամբ՝ նատուրայով կամ փողով: Վարպետը կաշառք էր վերցնում աշխատանքի ընդունել տալու համար, իսկ յերբեմն էլ բանվորներից փող էր ստանում նաև ավելի բարձրացված աշխատավարձի համար:

Կարելի յեր բազմաթիվ օրինակներ բերել, թե ինչպիսի ստոյացուններ պետք է կրեր բանվորը այս կամ այն ձեռնարկության մեջ ընդունվելիս: Կասածանափակվենք այդպիսի օրինակներից միայն մեկով: Ահա թե ինչպես էր կատարվում բանվորների ընդունելությունը «Ռուս-ամերիկյան ռետինի մանուֆակտուրայում» (այժմ «Կրասնի արեուզոլնիկ»):

«Հավաքագրումը կատարվում էր շաբաթական յերկու անգամ—յերկուշաբթի և հինգշաբթի օրերը: Դիրեկտորը մայթի յերկայնությամբ կանգնեցնում էր մարդկանց և ման էր գալիս, ընտրում էր, ինչպես մսագործն անատուններին նախիրում, նրանց, վորոնք ավելի ամրակազմ էին, բարձրահասակ էին, խոնարհ և հարգալից էին հարցերում, իսկ զիրեկտորի հետևից—նարհ և հարգալից էին հարցերում, իսկ զիրեկտորի հետևից—նրա թիկնապահ, ավագ նշող Ֆրանցը, «Դև» մականունով: Ֆրանցը գերմանացի յեր, ռուսերեն շատ վատ էր խոսում, և միայնցը գրավում էր. «Այստեղ յեկ, դե!», այնտեղ դնա, դե!»: Գեյգեն սոմսակ էր տալիս, իսկ «Դևը» ուղարկում էր միջանցքը, վորտեղ վարպետները տեսակավորում էին կատարում»:

Բայց այն ժամանակ էլ արդեն բանվորներին մեջ սկսեցին յերևան դալ մարդիկ, վորոնք մտածում էին բանվոր դասակարգի կյանքի բարելավման ուղիների մասին: Բանվորների պայքարը կապիտալիստներին դեմ ընդունում էր ավելի ու ավելի կազմակերպված և համախմբված բնույթ: Բանվորների գործադուլներն ավելի ու ավելի հաճախ էին զուգորդվում բանվորական շարժման ընդհանուր ինդիքներին և նպատակներին հետ: Կապիտալիստական իրավակարգի դեմ մղվող՝ բանվոր դասակարգի անհաշտ պայքարում ծնվեց, աճեց և ամրապնդվեց Լենինի—Ստալինի կուսակցությունը, կոմունիստական կուսակցությունը:

Բանվոր դասակարգը վերջին տասնամյակներում նախ քան Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, մի քիչ բարելավեց իր դրությունը—կրճատվեց բանվորական օրը, ավելացավ աշխատավարձը, բանվոր դասակարգի վերնախավը հնարավորություն ստացավ մի քիչ ավելի լավ ապրելու: Բայց սրա հետ միասին մեծացավ բանվորի նյութական դրության անկայունությունը: Կապիտալիզմի զարգացման հետ միասին ավելի հաճախակի դարձան ճգնաժամերը, վորոնց ժամանակ հարյուրհազարավոր բանվորներ դուրս էին չպրտվում գործարաններից ու ֆաբրիկաներից, գործարանի դարբասների մոտ ավելի ու ավելի յեր մեծանում աշխատանքի պահեստի բանակը:

Ռուսական բանվորն ավելի ու ավելի յեր անապահով պրոլետար դառնում, վորն աշխատելով այսոր, բոլորովին համոզված չեր, թե վաղն ել կաշխատի. ստանալով վորոշ վարձատրություն այսոր, նա բոլորովին համոզված չեր, վոր վաղն ել նույն վարձատրությունը կունենա:

Համեմատելով այժմյան Խորհրդային Միութեան բանվորի կյանքը հին ցարական Ռուսաստանի բանվորի կյանքի ու աշխատանքի հետ, մենք տեսնում ենք, թե ինչպիսի անդունդ կա նրանց միջև: Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը, վոչնչացնելով կապիտալիստների և կալվածատերերի տիրապետությունը, արմատապես փոխեց խորհրդային բանվորների կյանքի և աշխատանքի պայմանները: Յե՛վ կյանքի ամենակարևոր բարելավումներին մեկը յես համարում եմ այն, վոր բանվորի գլխին այժմ կախված չե մշտնջենական դամոկլյան սուրը,—բանվորը յերկյուղ չունի, վոր վաղը նա անգործ կմնա: Մեր բանվորները յերիտասարդ և նույնիսկ միջին սերունդն այժմ չի կարող մինչև անգամ մտքով պատկերացնել աշխատանքը կորցնելուց առաջացող այն զգացումը, վոր պրոլետարն ունենում էր անցյալում: Նույնիսկ բարձրագույն կատեգորիայի բանվորները, վորոնք համեմատաբար ավելի եյին ապահովված վոչ միայն իրենց աշխատավարձի չափով, այլև նրա մշտականութամբ, նույնիսկ այդ բանվորներն ել յերբեք չեյին ազատվում այն մտքից, վոր ամեն րոպե հնարավոր է, վոր կորցնեն իրենց աշխատանքը: Առանձնապես ուժեղ էր այդ զգացումը ճգնաժամերի և այսպես կոչված դեպրեսիաների ժամանակ:

Բանվորը, դործարանում աշխատելով, հատկանալի յե, բողիվում է տանապետի, վարպետի, արհեստանոցի պետի հետ: Կապիտալիստական արտադրութեան պայմաններում վարպետի և բանվորի շահերը միշտ իրար հակադիր են: Վարպետն ուղում է իրն ավելի եժան պատրաստել, քան այն իրոք արժե: Բանվորն ուղում է ավելի ստանալ: Այդ հողի վրա միշտ տեղի եյին ունենում ընդհարումներ: Վորքան ել թեկուղ բանվորը ձգտեր իրեն համեստ պահել, չջղայնացնել վարպետին ու համապատասխան մեծավորին, այնուամենայնիվ առորյա աշխատանքներում նա չեր կարող խուսափել այդ ընդհարումներից, իսկ յերբ վրա յե հասնում ճգնաժամը կամ դեպրեսիան, բանվորը հիշում է վարպետի հետ ունեցած այդ ընդհարման մասին և սպասում նրանից պատիժ ու հեռացում: Ամեն րոպե աշխատանքից հեռացված լինելու

այդ դիտակցությունը մի պատուհաս էր բանվոր դասակարգի համար և ստիպում էր նրան շարունակ զգաստ լինել, միշտ հաշվի առնել վարպետին, կշռադատել իր ամեն մի դործողությունը: Այդպես եր ցարական Ռուսաստանում, այդպես է կապիտալիզմի տիրապետութեան յերկրներում: Բոլորովին այլ դրություն է մեղ մոտ, Խորհրդային Միութեան մեջ, վորտեղ չկա մարդու շահագործում մարդու կողմից, վորտեղ լիովին վոչնչացված է դործադրելությունը, վորտեղ բանվորն ու վարպետը հետապնդում են միևնույն նպատակը—վորքան կարելի յե լավ ծառայել սոցիալիզմի գործին:

Այն դիտակցությունը, վոր յես դործարանում մշտական բանվոր եմ, այն դիտակցությունը, վոր յեթե մի դործարանում այս կամ այն պատճառով աշխատանքը պակասի, ինձ կփոխադրեն մի այլ գործարան, մշտականութեան դիտակցությունը, այն դիտակցությունը, վոր կուրեկտիվը կարիք ունի իմ աշխատանքին,—մարդուն ինքնուրույն է դարձնում, բարձրացնում է նրա կենսագործունեությունը, հնարավորություն է տալիս բանվորին միանգամայն հանդիստ կերպով իր ազատ ժամանակը նախընտրել հանգստի, զվարճությունների, իր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, հասարակական—քաղաքական կազմակերպությունների աշխատանքներին:

«Բանվորն ու կուլտուրեսականը լիովին վստահություն ստացան վաղվա որվա նկատմամբ, և իրենց դործադրած աշխատանքի քանակից ու վորակից է միայն կախված նրանց կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի ավելի ու ավելի բարձրացումը: ԽՍՀՄ աշխատավորի համար անհետացավ դործադրելութեան, աղքատութեան ու սովի սպառնալիքը: Վստահորեն ու բերկրալից է նայում ամեն մի բանվոր ու կուլտուրեսական իր ապագային, ավելի ու ավելի բարձր պահանջներ ներկայացնելով դիտութեանն ու կուլտուրային»<sup>1)</sup>:

Սոցիալիստական Մեծ հեղափոխութեան այս նվաճումն իր կնիքն է դնում ամբողջ բանվոր դասակարգի վրա, փոխում է նրա բնավորությունը, թերահավատ և վաղվա որվա նկատմամբ անվստահ մարդուց բանվորը դառնում է ակտիվ լավատես: Այս կարելի յե նկատել անթիվ—անհամար որինակներով:

Բայց մեր բանվորների լավատեսությունը վոչ մի առնչու-

1) ՀամԳ(բ)Կ XVII համագումարի բանաձևերը, էջ 6, Կուսհրատ, 1934 թ.:

Թյուն չունի այսպես կոչված «միջին ամերիկացու» լավատե-  
սության հետ, վորն իր կենսական բոլոր պլանները կառուցում է  
բախտի վրա, անհավատալի դեպքի վրա, անսպասելի յերջանկու-  
թյան, բարենպաստ դասավորվող հանդամանքների վրա: Հարկա-  
վոր է արդյոք ասել, վոր այս հույսերը մեծ մասամբ հանդիսա-  
նում են միմիայն դատարկ յերեակայություն, վորն անդթորեն  
վոչնչացնում են կապիտալիզմի պայմանները: Խորհրդային բան-  
վորի լավատեսությունն ավելի քան հիմնավորված է, վորովհետև  
դա բղխում է խորհրդային իրավակարգի բուն էությունից, դա  
ծագում է այն բանից, վոր առանձին բանվորի բարրության հա-  
մար մեղնում շահադրույթով է ամբողջ կոլեկտիվը, ամբողջ բան-  
վոր դասակարգը: Այդ լավատեսությունն ամրապնդված է ԽՍՀՄ  
Ստալինյան սահմանադրությամբ.—«ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն  
աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք  
ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա  
քանակի ու վորակի համապատասխան»: Ի՞նչ լավատեսություն  
կարող են ունենալ կապիտալիստական յերկրների բանվորները,  
յեթե նվազեցրած պաշտոնական տվյալներով ԱՄՆ-ում—կապի-  
տալիստական ամենաապահով յերկրում—ավելի քան տաս միլիոն  
մարդ կա գործազուրկ. Գերմանիայում գործազուրկների բանակը  
հալվում է 3,5 միլիոն, Անգլիայում—2 միլիոն, Լեհաստանում  
—367 հազար:

Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ուսական բանվոր-  
ին բերեց աշխարհում ամենակարճ բանվորական ուրը—յոթ-ժա-  
մյա բանվորական ուրը: Այս հսկայական նվաճում է, վորի նշա-  
նակությունը դժվար է գերազնահատել: Արտադրության մեջ ըն-  
դամենը յոթ ժամ գրառված լինելով, խորհրդային բանվորն իր  
տրամադրության տակ ունի 17 ժամ՝ քնելու, անձնական ու հա-  
սարակական կյանքի համար: Այս նշանակում է, վոր բանվորը  
բավականաչափ ժամանակ ունի իր քաղաքական և կուլտուրական  
մակարդակը բարձրացնելու համար. այս նշանակում է, վոր բան-  
վորը կարող է բավական ժամանակ նվիրել իր ընտանիքին. այս  
նշանակում է, վոր բանվորը բավականաչափ ժամանակ ունի հե-  
տևելու իր յերեխաների կուլտուրական զարգացմանը:

Այս բոլորից զրկված էյին ցարական Ռուսաստանի բանվոր-  
ները: Զրկված են դրանից նաև ամբողջ կապիտալիստական աշ-  
խարհի բանվորները:

Ցարական Ռուսաստանի բանվորների զավակները, վորպես

կանոն, հսկողությունից զուրկ էյին, իրենց ազատ ժամանակն  
անց էյին կացնում բանվորական թաղամասերի կեղտոտ հետնա-  
խորշերում, լրացնելով քրեական հանցագործների շարքերը. իսկ  
քիչ մեծանալուց հետո, դեռ դպրոցը չավարտած, դնում էյին  
գործարաններն ու Փաբրիկաները վորպես աշակերտ աշխատելու:  
Ցարական Ռուսաստանի բոլոր բանվորների մի յերրորդը սկսել  
է աշխատել գործարաններում և Փաբրիկաներում՝ տասներկու  
տարեկան չդարձած (ներանցից 10% Փաբրիկաներն է դնացել  
դեռևս 10 տարեկան էլ չդարձած). բանվորների մյուս յերրորդ  
մասը սկսել է աշխատել 12—14 տարեկան հասակում: Յեվ բան-  
վորների միայն մի յերրորդը սկսել է աշխատել տասնհինգ տարե-  
կան հասակից:

Այս ամենը հավիտենականության գիրկն է անցել: Այժմ աշ-  
խատավորների զավակները հնարավորություն ունեն կուլտուրա-  
պես սպասարկված լինելու: 1937 թվին ԽՍՀՄ միջնակարգ և տար-  
րական դպրոցներում սովորում է մոտ 30 միլիոն յերեխա: ԽՍՀՄ  
քաղաքացին բոլորովին հանդիստ է իր յերեխաների ուսման վերա-  
բերմամբ: Դրա համար կան ձրի դպրոցներ, ուր նա որենքով  
նույնիսկ պարտավոր է ուղարկել իր յերեխաներին: Ամեն մի  
յերեխայի հետագա ուղին ամբողջապես կախված կլինի նրա ըն-  
դունակություններից և հակումներից:

Այս մեղ մոտ դրամի չի վերածվում, այս պարզապես չի հաշ-  
վառվում բանվորի բյուջեյում, իսկ մինչդեռ այս պետական ծախ-  
սերի մեջ հսկայական հողված է: Բավական է ասել, վոր հին  
Ռուսաստանում միջնակարգ դպրոցի ուսման վարձը համեմատա-  
բար բարձր չէր, և այնուամենայնիվ մի յերեխայի ուսուցումն  
արժենում էր տարեկան 250 ուրբուց վոչ պակաս՝ վորակյալ  
բանվորի ամսական 40—45 ուրբլի միջին աշխատավարձի ժամա-  
նակ: Այստեղից հասկանալի յե, թե ինչու միջնակարգ ուսումնա-  
կան հաստատություններում բանվորների յերեխաներ համարյա  
թե չկային:

Սոցիալիստական հեղափոխության վոչ վոքը նվաճումներից  
մեկն է բանվորների ապահովագրումը հիվանդության, անաշխա-  
տունակության և ծերության դեպքերում: Ի՞նչ է նշանակում ձրի  
բժշկական ոգնություն: Յես վորակյալ բանվոր էյի, իմ վաստակը  
բանվորի միջին աշխատավարձից բարձր էր: Մի անգամ յես հի-  
վանդացա գործարանում: Յերկու ամիս պառկած էյի հիվանդ և  
այդ ժամանակվա ընթացքում ապահովագրական դանձարկից

ստացա ընդամենը 15 ուրբլի, մինչդեռ իմ ուժերից պահում եյին ապահովագրման 1 1/2%: Ավելացրեք դրան բժշկի վարձը, դեղերի արժեքը, և ձեզ համար պարզ կլինի, թե ինչպիսի դրու-թյան մեջ ընկա յես, վորակյալ բանվորս: Հիվանդության 2 ա-միսը, ինչպես առաջ ասում եյին, ինձ խտակ քամեցին:

Վերցնենք նյութական ապահովումը ծերության և աշխատու-նակությունը կորցնելու դեպքում: Քանի դեռ մարդ յերիտասարդ է, ուժեղ է, նա այդ հարցով չի հետաքրքրվում: Հին Ռուսաստա-նում այսպես եր լինում.—վորակյալ բանվորն ստանում եր հա-մեմատաբար վոչ վատ աշխատավարձ: Բայց ահա նա ծերացավ: Ի՞նչ կարելի յեր անել: Յեթե նա գործարանում յերկար տարիներ եր աշխատել, յեթե նրան համարում եյին գործարանային վար-չության հավատարիմ ծառա, ապա նրան վորակյալ աշխատան-քից փոխադրում եյին կամ պահակի կամ արհեստանոցի հավաքա-րարի պաշտոնի: Դրա համեմատ, իհարկե, պակասում եր նաև նրա աշխատավարձը: Մակայն չե՞ վոր այսպիսի դրության ար-ժանանում եյին միմիայն «յերջանիկները», միայն նրանք, վորոնց հատուկ բարյացակամությամբ եր վերաբերվում վարչությունը: Իսկ ծերունիների մեծ մասն արձակվում եր աշխատանքից: Կա-պիտալիստի համար բացարձակապես միևնույն է, թե ինչպես կապրի իր արձակած բանվորը, այն բանվորը, վորը 30—40 տա-րիներ ընթացքում հարստացնում եր իրեն: Հեռացված բանվորն իր ծերունի գոյությունը քարչ է տալիս կամ իր զավակների տոժանդակությամբ, յեթե նրանք փոքրիշատե ապահովված եյին լինում, կամ թե ուղղակի մի կերպ գլուխը պահում եր և մինչև փակ մուրացկանություն անում:

Այդպես եր վոչ միայն նախկին ցարական Ռուսաստանում, այդ տեղի յե ունենում նաև այժմ ամբողջ կապիտալիստական աշխարհում: Վորչաի ավելի զարգացած ե կապիտալիզմը, այնքան էլ ըստ տարիքի ավելի շուտ ե դուրս չալրավում գործարանից բանվորը, վորպես շահագործման համար քիչ պետքական մի ա-ռարկա: Ահա ձեզ բանվորի կապիտալիստական «ապահովվածու-թյունը» նրա ծերության ժամանակ:

Այլ գրություն է մեզ մոտ: Ամեն մի խորհրդային այնիվ քա-ղաքացի որենքով ապահովվում է իրեն պատկանող կենսաթոշա-կով: Պարզ է, վոր այս փաստերից յերնելով, կապիտալիստական աշխարհի և մեր մարդկանց հոգեբանությունը բոլորովին տար-բեր են իրարից:

Ճիշտ է, մեզ մոտ ել կան «խելոքներ», վորոնք, համեմատե-լով մեր բանվորի բնակարանն ու սնունդը ամերիկացի բանվորի բնակարանի և սննդի հետ, ասում են, վոր ամերիկացի բանվորն ավելի միտ է ուտում, ունի ավելի լավ բնակարան: Յես ընդու-նում եմ, վոր Ամերիկայի բանվոր դասակարգի ամենագործունյա մասը իր ուժերի ծաղկման շրջանում դուցե ավելի շատ շոկոլադ է ուտում, քան ուսսական բանվորը: Բայց չե՞ վոր պետք է հաշվել վոչ միայն շոկոլադի կտորները, պետք է հաշվել և այն հսկայական նյութական—կուլտուրական սպասարկումը, վոր ու-նեն Խորհրդային Միության աշխատավորները՝ հանգստի տներ, սանատորիումներ, մանկապարտեզներ և մանկամսուրներ, արձա-կուրդները հիլության պատճառով և այլն: Սրան պետք է ավե-լացնել հսկայական թվով թատրոնական—յերաժշտական կազմա-կերպությունները գործարաններում, ձրի համերգները, եքսկուր-սիաները և այլն, և մենք կտեսնենք, վոր յեթե այս բոլորը դու-մարենք մի տեղ, ինչպիսի հսկայական տարբերություն կա ԽՍՀՄ բանվոր դասակարգի դրության մեջ՝ համեմատած՝ Իրևե կապի-տալիստական յերկրի բանվոր դասակարգի դրության հետ: Պա-տահական չե, վոր մեր բոլոր թատրոնները լեվ—լեցուն են լինում: Ի՞նչ է վկայում այդ: Այդ վկայում է Խորհրդային պետության աշխատավորական մասսաների նյութական ունեւորության զգալի բարձրացման մասին, այդ վկայում է մասսաների կուլտուրական պահանջների բացառիկ աճման մասին: Այդ վկայում է այն մա-սին, վոր մեր աշխատավորական մասսաները դառնում են աշխար-հի ամենակուլտուրական մասսաները:

Այս բոլորը Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափո-խության հաղթանակների արդյունքն է: Այս բոլորը բանվորներին տվեց խորհրդային իշխանությունը: Խորհրդային իշխանությունը բանվոր դասակարգին Խորհրդային Միության ունեցած բոլոր հարատւությունների տերը դարձրեց: Նյութական և կուլտուրական արժեքների զարգացման ամեն մի առաջադիմական քայլը դառնում է աշխատավոր մասսաների սեփականությունը: Վորքան ավելի յե զարգացած կապիտալիզմը, այնքան աղքատ, անապահով է դառ-նում բանվորը: Վորքան ավելի հզոր և հարուստ է դառնում մեր հայրենիքը, այնքան ավելի ունեւոր և կուլտուրական է դառնում աշխատավոր մասսաների կյանքը:

Ահա թե ինչ է տվել Ժողովրդին խորհրդային իշխանությու-նը: Ահա թե ինչու են խորհրդային իշխանության ուժը: Ահա



Թե ինչու բանվոր դասակարգը, լինելով ստեղծողը, կազմակերպելը և գլխավոր մարտիկը, հանուն խորհրդային իշխանութան, ամբողջ իր հզորությամբ ամուր պահում է և աչալուրջ պահպանում իր խորհրդային իշխանութունը:

## ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԼԵՆԱՐԱՆՆ Ե

Խորհրդային իշխանութան համար մղած պայքարին, նրա ստեղծագործական ուժերի զարգացմանը բանվոր դասակարգի հետ միասին մասնակցություն է ցույց տվել և գյուղացիությունը: Խորհրդային իշխանութան ամենավտխերիմ թշնամիները հույս ունեյին, վոր Խորհրդային Միության գյուղացիությունը, վորը բարեկացած է գլխավորապես մանր սեփականատերերից, չի դնա բանվոր դասակարգի հետևից, չի դնա կոմունիստական կուսակցության հետևից, վոր կոլեկտիվացման անցնելիս նա չի հաշտվի արտադրության մեթոդների մասնավոր սեփականությունը կորցնելու հետ և կդնա խորհրդային իշխանութան դեմ: Այս նամերը չանցավ: Այժմ արդեն նույնիսկ յերեխայի համար ել պարզ է, վոր գյուղացիությունը կոմունիզմի պայքարի դործում դարձել է բանվոր դասակարգի ընկերակիցը:

Կապիտալիստները կոմունիզմից վախենում են, ինչպես սատանան խնկից, և իրենց յերկյուղը ուզում են տարածել աշխատավոր մասսաների, առանձնապես գյուղացիության վրա: Վո՛չ: Կոմունիզմը զարբերլի յե միայն կապիտալիստների համար, իսկ աշխատավոր մասսաների համար կոմունիզմը ջահ է, փարոս է, վորը ցույց է տալիս կապիտալիստական ստրկությունից նրանց դեպի ազատագրում տանող ուղին: Այս մասնավորապես ցույց տվեց և խորհրդային գյուղացիությունը, վորը հաստատապես և անդառնալիորեն կանգնեց կոլտնտեսական կյանքի ուղու վրա:

Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի ազդարային ծրագիրը 1905—7 թվականների ուսանական առաջին հեղափոխությունից ժամանակ» վերտառությունում իր գրքում գրել է. «10 միլիոն գյուղացիական տնտեսություններն ունեն 73 միլիոն դեսյատին հող, 28 հազար ազնվազարմ և փնթի լենդլորդերը՝ 62 միլիոն դեսյատին:

Այսպիսին է հիմնական Փոնը այն դաշտի, վորի վրա ծավալվում է գյուղացիական պայքարը հողի համար»<sup>1</sup>:

Շատ բան է տվել խորհրդային իշխանությունը գյուղացիությունը, վորը դարերով զրկված է յեղել, անզուսպ կերպով շահագործվել է, անվերջ կողոպտվել է ցարական ավազակների, կարվածատերերի և գյուղական կուլակ-ցեցերի ձեռքով: Գյուղացիական շատ զավակներ են վոչնչացել հողի համար մղվող դարավոր պայքարում: Բայց միայն խորհրդային իշխանութան որով գյուղացիներն իրենց նպատակին հասան, ստանալով ավելի քան 150 միլիոն հեկտար նախկին կարվածատիրական, պետական և վանքապատկան հողեր: Այդ հողը կարելի յեղավ ստանալ միայն այն բանի հետևանքով, վոր բանվորներն ու գյուղացիները վոչնչացրին կարվածատերերի և կապիտալիստների իշխանությունը, ջախջախելով նրանց ուղի դաշտերում:

Յեթե 150 միլիոն հեկտարի արժեքը վերածենք դրամի, ապա այդ կկազմի միլիարդներ՝ խլված կապիտալիստներից և կարվածատերերից, վորոնք իր ժամանակին կողոպտել են գյուղացիներին: Սակայն բանը միայն այդ դումարը չէ: Ի՞նչ է նշանակում՝ գյուղացիներն ստացել են ավելի քան 150 միլիոն հեկտար կարվածատիրական, պետական և վանքապատկան հողեր: Այդ նշանակում է, վոր գյուղացիներն իրենց վրայից թոթափել են կարվածատիրական շահագործման կարանքները, թոթափել են իրենց վրայից կարվածատերերի և կուլակների ամենորյա ճնշումը: Չե՞ վոր շնորհիվ այդ հողի կուլակները և կարվածատերերը գյուղացուն գրել էյին կյանքի անտանելի պայմանների մեջ: Ճնշման ձևերը, կուլակների և կարվածատերերի կողմից այդ հողերից ոգուտ քաղելը յեղել են անվերջ բազմազան: Կարվածատերը լճակ ունի. այդ լճակից ոգտվում է գյուղի տավարը: Դրա դիմաց գյուղացիները պարտավոր էյին աշխատել կարվածատիրոջ համար: Այն հողամասը, վորի վրայով գյուղացիներն իրենց դաշտերն են քշում անասուններին, գտնվում է հենց կուլակի հողամասի վրա, բարեհաճի դրա համար վճարել կուլակին: Կարվածատիրոջ կամ կուլակի հողամասը հասնում է մինչև գյուղացիական խրճիթները: Պատահամբ այդ հողամասն է ընկնում գյուղացու հավը՝ բարեհաճի նաև դրա համար վճարել:

«Գյուղացուն հասցրել էյին մուրացիկի կյանքի մակարդակին»

1) Լենին, Հատ. XI, էջ 337:

նա ապրում էր անասունների հետ միասին, հազնում էր ցնցոտի-  
նեո, կերակրվում թելուկով: Գյուղացին փախչում էր իր հողա-  
բաժնից, յեթե միայն փախչելու տեղ էր լինում, նույնիսկ փր-  
կագնվելով իր հողաբաժնից, հողաբաժինը վերցնել համաձայնո-  
ղին վճարելով այն մուծումները, վորոնք դարազանցում էին  
հողաբաժնի յեկամտից: Գյուղացիները շարունակաբար սովահար  
էին լինում տասնյակ-հազարներով մեռնում էին սովից և հա-  
մաձարակներից անբերրիության ժամանակ, վոր կրկնվում էր  
ավելի ու ավելի հաճախակի»<sup>1</sup>:

Կարվածատիրոջ տնտեսութեան մոտ լինելը գյուղական խըր-  
ճիթներին՝ իսկական դժբախտութեան էր գյուղի համար:  
Վորքան ավելի մեծ էր լինում կարվածատերերի թիվն այս կամ  
այն դավառում, այնքան ավելի ռեակցիոն էր լինում տեղական  
կառավարչութեանը: Ամենայնով որինակը կարող էր ծոռայե  
Կուրակի նահանգը: Այստեղ էր կարվածատերերի ամենամեծ թի-  
վը, առավել աղքատ, անդրազետ, ճնշված ոռու գյուղացիութեան  
ընդ, հենց այստեղ էր ամենառեակցիոն դեմսովներից մեկը:  
Մոտավորապես նույնպիսի պատկեր էր ներկայացնում Ուկրաին-  
ան, վորտեղ խոշոր կարվածատերերը տարեցատարի հազարավոր  
գյուղացիական ընտանիքների հարկադրում էին տեղափոխվել  
Հեռավոր Արևելք և ովկիանոսի մյուս կողմը, Ամերիկա:

Շատ բան է ավել խորհրդային իշխանութեանը գյուղացիու-  
թեանը, վորչնչացնելով կարվածատիրոջը և ցեց կուլակին:

Գյուղում կուլեկտիվացում անցկացնելով, խորհրդային իշ-  
խանութեանը լուծել է սոցիալիստական հեղափոխութեան ամե-  
նաբարդ խնդիրներից մեկը: Կուլեկտիվացման պրոցեսը շատ դժ-  
վար էր: Այդ միանգամայն բնական է: Մարդիկ դարերով ըստե-  
լացել էին վորոշ կենցաղավարութեան, իսկ կոմունիստական  
կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը կանչում էին  
նրան դեպի «անհայտը», կուլեկտիվացում էին մտցնում: Մեզ  
համար հասկանալի էին գյուղական մասսաների յերկյուղը,  
նրանց ծանր մտածմունքները...

Կուլեկտիվացում մտցնելուն հակառակում էին բոլոր հակա-  
խորհրդային տարրերը, ժողովրդի բոլոր թշնամիները, բոլոր  
նրանք, ովքեր գեթ փոքր հույս ունեյին հին կապիտալիստական


1) Լեհիմ, հատոր IV, էջ 101:

կրավակարգի վերադարձի նկատմամբ: Նրանք քիչ բան չարին  
կուլեկտիվացման գործի վիժեցման համար:

Այնուամենայնիվ հաղթանակեց առողջ դատողութեանը,  
չքաղոր և միջակ գյուղացիութեան հավատարմութեանը բանվոր  
դասակարգին: Տեղի ունեցավ չքաղոր-միջակ մասսաների արմա-  
տական շրջադարձը դեպի կուլտնտեսական շինարարութեան կողմը:  
Կուլեկտիվացումը փայլուն կերպով անցկացվեց: Կուլակութեանը  
— կապիտալիստական վերջին դասակարգը — վերջնականապես  
ջախջախվեց: «Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է,  
վոր առնվազն քսան միլիոն գյուղացի բնակչութեան, առնվազն  
քսան միլիոն չքավորների մենք փրկեցինք աղքատութեանից ու  
ավերումից, փրկեցինք կուլակային ստրկութեանից և կուլտնտե-  
սութեանների շնորհիվ դարձրինք ապահովված մարդիկ»<sup>1</sup>:

Ի՞նչ բան է կուլեկտիվացումը: Վորո՞նք են նրա առավելու-  
թյուններն անհատական գյուղացիական տնտեսութեան հանդեպ:  
Յես կարծում եմ, վոր այժմ ամեն մի կուլտնտեսական ավելի  
համոզեցուցիչ կերպով, քան յես, կարող է ապացուցել այդ  
առավելութեանները: Յես միայն կհիշեցնեմ բոլորին հայտնի  
ճամբարութեանը՝ կուլեկտիվացումը հնարավորութեան տվեց  
կուլտուրական դարձնելու գյուղի խամուած, վատ մշակվող,  
խոպան հողերը: Այս մեծ նվաճում է: Այս հաղթութեան պտուղ-  
ները մենք քաղում ենք այս տարի: Նախնական հաշվումներով  
մենք այժմ ունենք մոտ 7 միլիարդ փութ հաց: Կարծում եմ, ա-  
մեն մի խելամիտ կուլտնտեսական մատիտը ձեռքին կարող է հաշ-  
վել, վոր հողի անհատական յեղանակով մշակելու ժամանակ ա-  
մենամեծ բերքի տարիներին մենք չէինք կարող ստանալ այսպի-  
սի բերք: Այս էլ հենց բնական է: Չպետք է մոռանալ, թե ինչ է  
նշանակում հողի անհատական յեղանակով մշակում: Այդ նշանա-  
կում է, վոր ամեն մի գյուղացի ամեն մի դաշտում ունի մի քանի  
հողաչերտ: Մեկը հողը լավ է մշակում, մյուսը՝ վատ. մեկի ձին  
լավն է, մյուսինը՝ անպետք: Մեր գյուղացիները շատ լավ են հի-  
շում, թե ինչպես նրանք իրարից հող էին գողանում: Չուր չէ,  
վոր ժողովուրդը այդ հավերժացրել է առածով՝ «Միջնակն ու  
սահմանը կռիվ են ու նախատինք» («Межи да грани — ссоры да  
брани»): Նա, ով առաջինն էր հերկում, հարևանի հողամասից

1) Ստալին, Լենինի գծի հարցերը, էջ 659, 10-րդ հրատ., Հայկուսհրատ,  
1935 թ.:



մի շերտ պոկում ու գցում եր իր հողամասի վրա, վորեք միշտ տուժում եյին չքավորները:

Կոլեկտիվացումը վոչնչացրեց հողաշերտերի միջև յեղած աղոսները, վոչնչացրեց միջնակները, վորոնք գրավում եյին ամբողջ հողի մոտավորապես 3-ից—5%-ը, մոլախոտերի մշտական բուժարան եյին հանդիսանում: Այնուհետև, մի գյուղացի ցանում է մի տեսակ հաց, մյուսը՝ այլ տեսակ. մի գյուղացու սերմերը տեսակավոր են, մյուսինը՝ աղտոտ. մեկի հացն արդեն հավաքվում է, մյուսինը դեռ բոլորովին կանաչ է. մեկը վարսակ է ցանում՝ մյուսը, կողքին՝ կարտոֆիլ: Գյուղական տնտեսութան մեջ յեղած այս խառնաշփոթությունը, վորն անհնար եր վերացնել անհատական, մանր տնտեսության որով, գյուղական դաշտերը դարձնում եր անխնամ և սակավ բերքատու:

Կոլեկտիվացումն ստեղծեց բոլոր անհրաժեշտ պայմանները գյուղական տնտեսության մեջ տեխնիկական հեղափոխություն կատարելու համար: Մի՞թե կարելի յեր տրակտորը բանեցնել գյուղացիական նեղ հողամասերի վրա: Մի՞թե կարելի յեր այդ հողամասերի բերքահավաքին գեթ վորևէ չափով գործադրել, որինակ, կոմբայնը: Ընդհանրապես ասած, գյուղացիական անհատական տնտեսությունը հավիտենական արգելակ եր գյուղատնտեսության մեջ մեքենային մշակում մտցնելու գործում: Միայն կոլեկտիվացումը հնարավորություն տվեց հողը կուլտուրապես մշակելու, ոգտագործելով գիտություն և տեխնիկայի բոլոր նվաճումները: Կոլտնտեսային և խորհրդային դաշտերը միմիայն 1937 թ. ստացան մեկ միլիարդ 200 միլիոն ռ. գյուղատնտեսական մեքենաներ, իսկ 1936 թ. գյուղատնտեսական մեքենաշինարարության ամբողջ արտադրանքի արժեքը, տրակտորաշինարարության հետ միասին, հավասար եր 2 միլիարդ 260 միլիոն ռուբլու:

Կոլեկտիվացման հաղթանակը պատմական հաղթանակ է: Ի՞նչ է տալիս նա ժողովրդին: Նա գյուղացիներին ազատում է մի շարք բացառիկ ծանր ֆիզիկական աշխատանքներից: Բավական է հիշել արորով, կամ այսպես կոչված Ռյազանի գութանով հերկելը, կալսումը, հունձը—աշխատանքներ, վորոնք գյուղացիական հսկայական աշխատանք եյին կլանում, տալով վերին աստիճանի ցած արտադրողականություն: Իսկ այսոր մեր դաշտերում աշխատում են 450 հազար տրակտոր և 121 հազար կոմբայն: Գյուղացիական անհատական աշխատանքը հսկայական ժամանակ եր

խում գյուղացուց: Նրա տնային առորյա աշխատանքները հնարավորություն չեյին տալիս գյուղացուն դեթ մի րոպե մտածելու իր դրության մասին՝ վորպես պետութան քաղաքացու, մտածելու իր քաղաքական և կուլտուրական մակարդակի բարձրացման մասին: Անհատական աշխատանքը վորքիկ հողամասի վրա, վաղվա ուրվա նկատմամբ շարունակ անվստահ լինելը՝ նեղացնում եյին գյուղացու մտահորիզոնը, սահմանափակում եյին նրա մտավոր շահագործությունը, բթացնում եյին նրան: Յեվ գյուղացու այս խղճով սեփականությունն ուղում եր ոգտագործել հակահեղափոխությունը:

Խորհրդային իշխանությունն աճեցրել է անվանի կոմբայնավար Կոնստանտին Բորինին, վորն իր կոմբայնով հավաքել է 2 հազար հեկտար հասկավոր կուլտուրաներ: Այդ նշանակում է, վոր Բորինի կոմբայնի բունկերով անցել է ամենաքիչը 180 հազար փութ հացահատիկ: Յեթե յենթադրենք, վոր Բորինի ազրեդատը յուրաքանչյուր ուր հավաքել է 75 հեկտար, ապա դուրս կդա, վոր մի ազրեդատով Բորինը որական փոխարինել է 950 մարդու, 150 ձիու, 37 քամհարի և 20 ձիու կալսիչների: Սա այն դեպքում, յեթե վոր 75 հեկտարի բերքահավաքը կատարվեր ձեռքով, իսկ կալսումը—ձիու կալսիչներով:

Խորհրդային իշխանությունն աճեցրել է Պետրովին (Կյուլչևսկի ՄՏԿ), վորը որական հավաքում է 23 հեկտար վուչ: Վուչի այս ամբողջ քանակը ձեռքով չափելու համար հարկավոր եր գործադրել 230 մարդու ծանր աշխատանք:

Կոլեկտիվացումը գյուղատնտեսության մեջ մտցրեց առաջավոր տեխնիկա: Կոլեկտիվացումը ամեն մի գյուղացուց օդահանջեց ավելի մեծ կազմակերպվածություն և իր աշխատանքի գույքորդումը համագյուղացիների աշխատանքի հետ: Կոլեկտիվացումը նպաստում է գյուղում խորհրդային ինտելիգենցիա ստեղծելուն: Նա առաջ քաշեց գյուղում կոմբայնավարներ, տրակտորիստներ, մեխանիկներ, խրճիթ-լաբորատորիաների լաբորանտներ, կոլտնտեսության նախագահներ, բրիգադիրներ, գրասենյակային աշխատողներ: Գյուղացին առաջ իրեն անվանում եր հողագործ: Այդ ճիշտ եր: Նա իր ջոտոտ ձիու հետ միասին քչփորում եր հողը: Իսկ ա՞յժմ: Ահա մի որինակ. Խորհուրդների Համաժողովենական Արտակարգ համագումարի պատգամավորների թվում 13%-ը տրակտորիստներ եյին, 8%-ը—կոմբայնավարներ, 26%-ը կոլտնտեսությունների նախագահներ, 10%-ը բրիգադիր-

ներ, 20%—ը—ողակավարներ, 6%—ը—անասնաբուծական Ֆերմաների վարիչներ, 12%—ը—կով կթողներ, հորթապահ և խոզ պահող կանայք, 2%—ը—հովիվներ, 3%—ը—թեյ, բամբակ և ուրիշ տեխնիկական կուլտուրաներ հավաքողներ: Մի՞թե սա ցուցանիչ չէ այն բանի, վոր «խորհրդային գյուղացիութունը—միանգամայն նոր գյուղացիութունն է, վորի նմանը դեռ չի իմացել մարդկության պատմութունը»<sup>1</sup>:

Շնորհիվ կոլեկտիվացման գյուղական կյանքը արագորեն ակեց նմանվել քաղաքի բնակչի կյանքին, գյուղացու մտահորիզոնը ընդլայնվեց: Վիթխարի չափով աճեց գյուղի ամբողջ կուլտուրան: Առաջներում գյուղացուն անասելի դժվար էր հասնել մարդկային գիտելիքների բարձունքներին: Միակ ուղին—դա չարչիության ուղին էր, վորով միլիոնավոր գյուղացիներն էին միայն հատ ու կենտ մարդիկ էլին կարողանում վաճառական դառնալ գոբիոլության և ամեն տեսակ խարդախությունների միջոցով: Միջակ գյուղացին միայն յերազել կարող էր վոչ միայն միջնակարգ դպրոցի, այլև ընդհանրապես դպրոցի մասին: Այժմ գյուղը համարյա հավասարվել է քաղաքին—նա ունի վոչ միայն տարրական, այլև միջնակարգ կրթության դպրոցների բավականին խիտ ցանց: Մեքենայացված արտադրութունը գյուղում ինքնին նպաստում է նախաձեռնության զարգացմանը, գյուղացիների զավակների ինքնավստահությանը դիտության, տեխնիկայի և արվեստի մեջ: Կարմիր բանակի հրամանատարական կազմում, խորհրդային որդաններում, ձեռնարկությունների ղեկավարման, գյուղատնտեսության ղեկավարման գործում գյուղացիները և զեղջկուհիները պատվավոր տեղ են գրավում:

Հեշտ ճանապարհ չի անցել գյուղացիութունն այս քսան տարվա ընթացքում: Մանր սեփականատիրությունից գյուղացին դարձել է կուլտուրական, ունևոր կյանք ստեղծող կոլեկտիվիստ: Կոլտնտեսությունները գյուղացուն հնարավորություն տվին խորհրդային հսկայական դաշտերի իրական տերը դառնալու, հնարավորություն տվին ստեղծելու այդ դաշտերում այնպիսի արժեքներ, վոր վոչ միայն չքավորը, այլև նախկին կալվածատերն էլ յերազում չէր տեսել: Գյուղացին դարձավ իսկական տերը, իր սեփական յերջանկությունը ստեղծագործողը: Այս բոլորը տվել է խորհրդային իշխանութունը:

1) Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախադի մասին, էջ 16, Հայկուհրատ, 1936 թ.:

Կոլտնտեսական գյուղացիները հանդիսանում են իրենց հայրենիքի հավատարիմ զավակները, խորհրդային իշխանության ամուր հենարանը:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԻԱՆ

Դեռ 1894 թվին Լենինը գրել է այն մասին, վոր ինտելիգենցիայի կազմը բնորոշվում է հետեյալ ձևով.—յեթե հասարակության մեջ «թագավորում և ղեկավարում է կապիտալիստը», ապա ինտելիգենցիայի մեջ «տոն է տալիս կարյերիստների և բուրժուազիայի վարձկանների ավելի ու ավելի աճող ամբոխը<sup>1</sup>)...»:

Ինտելիգենցիայի վերին խավերը—խոշոր չինովնիկները, բժիշկները, իրավաբանները—իրենց արմատներով սերտորեն կապված էյին խոշոր կապիտալիստական և կալվածատիրական տարրերի հետ: Այդ ինտելիգենցիայի մասին Լենինը կարճառոտ ասում է՝ նա «փնտռում է միայն նրան, ով իրեն կկերակրի»<sup>2</sup>: Ո՞վ կարող էր նրան կերակրել: Ու՞մ մոտ էր նա ծառայության մտնում: Միանգամայն հասկանալի յե, վոր տիրող հարուստ դասակարգի մոտ, նրանց պետք է նա ծառայեր—«վորովհետև նրա համար այլ յեղ չկար»<sup>3</sup>):

Մեր հին ինտելիգենցիան կարծում էր, վոր ինքը կանդնած է դասակարգերից վեր և արտահայտում է ժողովրդի շահերն ամբողջությամբ վերցրած: Այդ մասին առաջ շատ էր գրվում: Իսկ ըստ էյության նույնիսկ նրա ամենազեմոկրատիկ մասն արտահայտում և պաշտպանում էր իր բնակչության մանր-բուրժուական խավերի շահերը: Հասկանալի յե, դրանով յես չեմ ուզում ասել, վոր ինտելիգենցիան իր միջից չի տվել ժողովրդական գործի համար մարտիկներ:

Մինչհեղափոխական ինտելիգենցիայի հիմնական մասը համակված էր բուրժուական աշխարհայացքով: Հիշեցե՛ք նախկին ինտելիգենցիայի կազմը: Ֆելդշերներ պատահում էյին յերբեմն և հասարակ գյուղացիներից կամ բանվորներից, բայց իրենց Ֆելդշերական կրթությունը նրանք ստանում էյին դեղերում: Գյուղերում նրանց ծագրանքով անվանում էյին «ձիու Ֆելդշերներ»<sup>4</sup>,

1) Լենին, Կ. I, էջ 262, Հայկուհրատ, 1930 թ.:  
2) Նույն հատորում, էջ 197:  
3) Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախադի մասին, էջ 16, Հայկուհրատ, 1936 թ.:  
4) Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միության Սահմանադրության նախադի մասին, էջ 16, Հայկուհրատ, 1936 թ.:

«ձիւրբութիւնք» . մանկաբարձուհիներն արդեն մանր-բուժուական միջավայրից , առաջելապէս կուշակային ընտանիքներից յեւածներ հին : Ուսուցիչներն իրենց մասսայով առած քահանաների , կուշակների , մանր չինովիների և այլոց զավակներ էյին : Շատ հազվադեպ էյին պատահում ուսուցիչներ միջակ գյուղացու ընտանիքից , ել չեմ խոսում չքայր ընտանիքի մասին :

Ինտելիգենցիայի այս դեմոկրատիկ մասն իր գրությամբ ամենից ավելի յեր կապած գյուղի ունեոր վերնաստիկ հետ : Այդ կարելի յե յեզրակացնել թեկուզ հետևյալ պարզ փաստից . ամեն մի յեկեղեցական տոնին՝ գյուղի ուսուցիչը , Ֆելդչերը , գրքերին-տնտեսատերը , ջաղացպանը և մյուսները հավաքվում էյին , վորպէս կանոն , հարուստ գյուղացիների մոտ :

Ամբողջությամբ վերջած ինտելիգենցիան շատ հեռու յեր ժողովրդից : Նույնիսկ 70-ական թվականներ Նարոդովոլոցների վրա , վորոնք «գնում էյին ժողովրդի մեջ» , ժողովուրդը իսկում էր ինչպէս «սպիտակ վոսկրի» ներկայացուցիչներ վրա , հալատ չեր ընծայում նրանց՝ ինչպէս տիրոջ դասակարգի միջից յեւածներ և առանձին դէպքերում նրանց հանձնում էր իշխանութիւններին :

Ռուս ինտելիգենցիայի , առանձնապէս նրա դեմոկրատիկ մասի գրութիւնը , ել չեմ խոսում հին ցարական Ռուսաստանի մյուս ժողովուրդների ինտելիգենցիայի մասին , վորքերդական էր : Յարական իշխանութիւն որդաններում և կալվածատիրական սեակցիոն պեմսովոյում լինելով ստորագաս պաշտոններում , դեմոկրատական ինտելիգենցիան , տեսնելով ժողովրդի հակայական դրժ-քախտութիւնները , չեր կարող էյականորեն ոգնել նրան , և մասնավանդ վոր խակական յեւքը չեր իմանում : Նա չեր տեսնում այն դասակարգը , բանվոր դասակարգը , վորը գլխավորեր պայքարը ցարական ինքնակալութիւն և ամբողջությամբ առած կապիտալիզմի դեմ : Ռուս դեմոկրատ ինտելիգենտի այդ վորքերգութիւնը պայծառ շիթի պէս անցնում է ամբողջ ուսական դրականութիւն միջով :

Առավել առաջավոր , հեղափոխականորեն տրամադրված ինտելիգենցիան անցնում էր ժողովրդի կողմը , իսկ բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հետագա զարգացումը նրա լավագույն զավակներին գրավեց մարտնչող պրոլետարիատի շարքերի մեջ , վորը գիտական սոցիալիզմի գաղափարների միակ հետևողական մարտիկն է :

Ինտելիգենցիայի գլխի մասի նվիրված լինելը բուրժուական կապիտալիստական իրավակարգին՝ սուր կերպով յերևան յեկավ , յերբ բոլշեիկները գրավեցին իշխանութիւնը : Ինտելիգենցիան լցվում էր ետերների , մենչեիկներ և այլ ավանտյուրական-քաղաքական խմբերի մեջ , վորոնք զենքը ձեռքին կուլում էյին խորհրդային իշխանութիւն դեմ : Ինտելիգենցիայի գլխի , յեթե վոչ մեծ մասը , սարտաժով դիմավորեց խորհրդային իշխանութիւնը :

«Առանց մեզ չեն կարող յուրա գնալ» , — մտածում էյին կապիտալիստներին և կապիտալիստական պետութիւնը ծառայելու սովոր ինտելիգենտները : Սակայն այդ դատարի յերեակալութիւն էր : Հոկտեմբերյան հեղափոխութիւն առաջին տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում լենինը հայտարարեց . — «Բանվոր դասակարգը ապացուցեց , վոր ինքը կարողանում է առանց ինտելիգենցիայի և առանց կապիտալիստների արդյունաբերութիւն կազմակերպել»<sup>1)</sup> :

Պրոլետարիատի կողմից իշխանութիւնը գրավելու ժամանակվանից անցել է քսան տարի : Հին ինտելիգենցիան այժմ , իր ճնշող մեծամասնությամբ կանգնած լինելով խորհրդային իշխանութիւն դիրքերի վրա , ազնվորեն , ամբողջ ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիստական շինարարութիւնը : Նրա կողքին աշխատում են բանվոր դասակարգի և գյուղացիութիւն ընդերքից դուրս յեկած , խորհրդային իրավակարգի պայմաններում ձեւավորված , տասնյակ և հարյուր-հազարավոր յերիտաբում ձեւավորված , տասնյակ և հարյուր-հազարավոր յերիտաբում մասնակցներ : Այս նոր խորհրդային ինտելիգենցիան որդանապէս , սերտորեն և անմիջականորեն կապված է ժողովրդի հետ :

Բանվորների և կոլտնտեսականների զավակները , ավարտելով տարրական դպրոցը , վոչ միայն իրավունք , այլ և դորձնական հնարավորութիւն ունեն ուսումը շարունակելու միջնակարգ , այնուհետև և բարձրագույն դպրոցում , վորտեղ ուսանողների վոչ միայն ուսուցման , այլև պահելու ծախսը լիովին վերցված է պետութիւն հաշվին : Մեր յերկրում ամեն մի յերիտասարդ կարող է ընդունվել ԲՈՒՀ , անկախ սոցիալական ծագումից : Միջնակարգ դպրոցը «գերազանց» ավարտողները բարձրագույն ուսումնական հիմնարկներում ընդունվում են առանց կոնկուրսային քննութիւնների :

Մեր ինտելիգենցիան կարիք չունի սարքովի «ժողովրդի մեջ

1) Լեճին , Հ . XXIII , էջ 243 :

գնալու», քանի վոր նա ինքը ժողովրդի որգանական մասն է հանդիսանում, ապրում է ժողովրդի շահերով և ձգտումներով: Մեր ուսանողը ժողովրդի մեջ չի դնում, այլ արձակուրդներին դնում է իր ծննդավայրը, իր հարազատ միջավայրը: 1937 թվի ամառը Սարկովի մարզի Նովոսենֆարսկու շրջանի Մալայա Պերեչեպկինա գյուղում հանդատանում էլին մոտ 50 ուսանողներ—այդ գյուղի կոլտնտեսականների տղաներն ու աղջիկները: Հենց միայն այդ փաստը միանգամայն բավական է հասկանալու համար, թե կուլտուրական ինչպիսի խոր փոփոխություններ են կատարվել մեր ժողովրդի կյանքում, վորը իր միջից առաջ է քաշում իր ինտելիգենցիան:

Համարձակ կարելի չէ ասել, վոր մեր ինտելիգենցիան դանվում է բացառիկ յերջանիկ պայմաններում: Ամենասերտ կապերով կապված լինելով ժողովրդի հետ, ինտելիգենցիան ժողովրդի հետ միասին մասնակցում է սոցիալիզմի շինարարության, կոմունիզմի դադարները կյանքում կիրառելու գործին: Սորհրդային մասնագետը սոցիալիստական շինարարությանը մասնակցում է վոչ միայն վորպես շարքային մարտիկ, այլ և վորպես կազմակերպիչ, ղեկավար: Սորհրդային ինտելիգենցիայի ստեղծագործական գործունեությունը յենթարկված չէ, ինչպես բուրժուական յերկրներում, կապիտալիստների շահամուլությանը: Մեզ մոտ, Սորհրդային յերկրում, նա ամբողջապես ծառայում է ժողովրդի շահերին: Մեր ինտելիգենցիան չզիտե գործադրկություն, մեզ մոտ չկա ինտելիգենտային աշխատանքի մարդկանց ավելցուկ, ինչպես այդ գոյություն ունի կապիտալիստական բոլոր յերկրներում: Ընդհակառակը, մեր պետությունը ձգտում է բոլոր բանվորներին հասցնել ինժեներ-տեխնիկական աշխատողների մակարդակին:

Այդպես է ինտելիգենցիայի—գիտության, տեխնիկայի և գեղարվեստի մարդկանց դրությունը: Միմիայն խորհրդային իշխանության որով ինտելիգենցիան հնարավորություն ստացավ լիովին զարգացնելու իր ընդունակությունները և անսահմանորեն ծառայելու ժողովրդին:

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՐԿԻՐ Ե

Ռուսական կայսրությունը տարածված էր բազմաթիվ ազդություններից բաղկացած՝ բազմամիլիոն ազգաբնակչություն ունե-

ցող հսկայական տերիտորիայի վրա: Հարյուրավոր տարիների ընթացքում ցարիզմն անընդհատ իրեն էր միացնում մերձակա հողերը, նվաճված ժողովուրդներին հպատակեցնելով իր տիրապետությանը: Այս ժողովուրդներին նվաճումը դաժան բնույթ էր կրում: Գյուղացիական լավագույն հողերն առաջին հերթին հափշտակում էլին ցարական սատրապներն, իսկ նրանց հետևից գալիս էլին ուս կապիտալիստները, մանր փերեզակները, վերագնորդները, ամեն տեսակի շահագործողները, վորոնց առաջին միտքն էր՝ կողոպտել զաղուլթները:

Ահա ուսական կոլտնիզատորների «գործունեություն» բազմաթիվ պատկերներից մեկը:

Յարական միլիտար Կուրոպատկինի 1904 թվին Հեռավոր Արևելք գնալու ժամանակ բուրյատ-մոնղոլների պատվիրակությունը դանդաղ ներկայացրեց նրան տեղական իշխանությունների կամայականության դեմ: Ի պատասխան այդ դանդաղի, Կուրոպատկինը պատվիրակությանը հայտարարեց հետևյալը. «Նկատի ունեցեք, վոր յեթե ձեր ժողովուրդն իրեն վատ պահի, պատասխանատուն դուք եք, իսկ յեթե, ասոված մի արասցե, ձեր ժողովուրդը հանկարծ մտածի վորևե ազատ վարմունք թույլ տալ իրեն, հակառակել թագավորի հրամաններին, դիտցեք, վոր դուք բուրեպպես կ՛ընվեք յերկրի յերեսից: Ձեր հետքն անգամ չի մնա: Ահա տեսեք, այստեղ ինչքան ուսական դուրք կա, իսկ բերել տալ կարելի չէ հարյուր հազարներ, և դուք մի ակնթարթում կ՛ճզմվեք ու կվոչնչանաք: Դուք վոչինչ չպետք է պահանջեք: Դուք կարող եք վողորմություն խնդրել միայն»:

Յարիզմը դաժանորեն ճնշում էր ուս ժողովրդին, ավելի մեծ դաժանությամբ հարձակվում էր նա վոչ-ուս բնակչության աշխատավորների վրա: Ի դուր չէր, վոր ցարական Ռուսաստանը «ժողովուրդների բանտ» էլին անվանում: Յարիզմը համաձայնության մեջ էր մտնում կեղեքված ժողովուրդների տիրող դասակարգի՝ եմիրների, լսաների, բեկերի, տեղական խոշոր կապիտալիստների հետ, մոտեցնում էր այդ վերնախավը ցարական դահին և ամբողջ ծանրությամբ, ուս և տեղական ազգային բուրժուազիայի ու կրոնական պաշտամունքի սպասավորների դրամական սլարկերի ուժով ճնշում էր ազգային գյուղացիությանը: Խավարն ու սոցիալիստները զաղախների, թուրքմենների, ուզբեկների, թուրքերի, չուվաշների և մյուս ժողովուրդների մշտական ուղեկիցներն էլին: Իրավադրկությունը, անհույս աղ-

քատությունը, նորանոր բռնութիւնները մշտական սպառնալիքը, ազգութիւնների միջև կեղեքիչների կողմից արհեստական կերպով հրահրված յերկպառակութիւնները, պաշտամունքի սպասավորների բացարձակ հեղինակութիւնը—ազգային փոքրամասնութիւնների կյանքը դարձրել էին իրոք արցունքի հովիտ:

Հասկանալի յե, ազգային փոքրամասնութիւնների մեջ այս սմեհն առաջացնում եր սարսափելի ատելութիւն դեպի ցարիզմը, դեպի նրա չինովնիկները, իսկ նրանց պատճառով և դեպի ամբողջ ռուս ժողովուրդը: Թ՛վում եր, վոր յերբեք չի դա աֆսլիսի ժամանակ, յերբ այդ ժողովուրդները յեղբայրական սերտ կապերով կապվեն ու ապրեն ռուս ժողովրդի հետ: Իսկ ցարական կառավարութիւնը, ռուս և վոչ-ռուս կալվածատերերն ու կապիտալիստները, վաճառականներն ու առևտրականները, գեներալները, չինովնիկներն ու տերտերներն ամեն ինչ անում էին, վորպեսզի հրահրեն ինչպես ատելութիւն դեպի ռուսականը, նույնպես ատելութիւն և անբարյացակամութիւն բոլոր ազգութիւնների միջև: Բոլորին հայանի յե այն մշտական թշնամութիւնը թուրք և հայ ազգաբնակչութիւնների միջև, վորը պատճառ եր դառնում ջարդերի և տասնյակ-հազարավոր մարդկանց բնաջնջման:

Յարիզմն ու տիրող դասակարգերը ժողովուրդների միջև թշնամութիւն հրահրելով, նրանց միմյանցից խորթացնելով աշխատում էին ամբացնել իրենց հիմքերը:

Ճնշված փոքրամասնութիւնների շարքերում վաղուց ի վեր հասունանում էին տենչեր և հուլիսեր իրենց ազատութեան համար: Գիշ չէին բողոքները, ապստամբութիւնները ներքին և արտաքին. վրացական, ուկրաինական, հրեական, հայկական, բելոռուսական, բուրյատ-մոնղոլական, յակուտական և Ռուսաստանի այլ ժողովուրդների հեղափոխական շատ մարտիկներ իրենց կյանքը զոհեցին ազատ և յերջանիկ կյանքի համար մղած պայքարում: Բայց ազգային ծայրերկրների ժողովրդական մասսաների բոլոր ապստամբութիւնները, բողոքները դաժանորեն ճնշվում էին ցարական սատրապների կողմից:

«Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիներն իրենցից թութափեցին ցարիզմի դահիճներին և կապիտալի ճնշումը շնորհիվ այն բանի, վոր հասկացան իրենց ազատագրական խնդիրը և Ռուսաստանի մյուս ազգութիւնների աշխատավորների հետ միասին ստեղծեցին ամուր յեղբայրական դաշինք խորհրդային իշ-

խանութիւն հաստատելու, սոցիալիզմ կառուցելու համար մղվող պայքարում»<sup>1)</sup>:

Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութիւնը ջարդեց ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ուժերը կաշկանդող կապանքները: Աշխատավորները կերտեցին իրենց սոցիալիստական բազմազգ պետութիւնը—Սորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը, վոչ թե ժողովուրդների ճնշման և բռնութեան, այլ հոժարակամ միավորման արդիւով:

Սորհրդային իշխանութեան գոյութեան քսանամյակին մենք ունենք Սորհրդային Միութեան տառացիորեն բոլոր ժողովուրդների տնտեսութեան և կուլտուրայի ծաղկումը: Ձե՞ վոր դեռես վոչ-հեռու անցյալում Միջին Ասիայի, Անդրկովկասի, Գաղստանի, Չեչենո-Ինգուշեթիայի և մյուսների չքավոր գյուղացիութիւնն իր հողը մշակում եր անհիշելի ժամանակներից պահպանված պրիմիտիվ գործիքներով: Մարդկային ուժերի ամբողջ լարվածութեան և հսկայական կորստի առկայութեան պայմաններում այդ պրիմիտիվ մշակումը չնչին արդիւնք եր տալիս, վորի յերեք քառորդը խլում էին շորթիչները:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութիւնը Միութեան ժողովուրդներին արթնացրեց դեպի բացառիկ ստեղծագործութիւն: Թ՛վում է, վոր բանվոր դասակարգի և գյուղացիութեան հաղթանակի հետ միասին դարերի ընթացքում կաշկանդված ժողովրդական յեռանդը ահռելի ուժով դուրս պոսթիկաց: Հարյուրավոր դրքեր կարելի յեր գրել ամեն մի ժողովրդի ստեղծագործութեան մասին:

Նայենք անցյալի գյուղատնտեսութեան վրա, այն դաշտերին և այն անտարբեր մշակմանը, յերբ մարդը կարծես անտեսանելի շղթաներով կապված եր իր անշնորհակալ դաշտերին: Այժմ այդ դաշտերը և նրանց վրա աշխատողները բոլորովին կերպարանափոխվել են: Բամբակի և հացահատիկային դաշտերում լավում ե տրակտորների ռիթմական հոնդոցը. աշխատանքի ամենապրիմիտիվ գործիքը՝ ամաչը կարելի յե տեսնել, թեքես, միայն թանգարաններում: Կավի յեղրադրվազներով շրջապատված և տարերային անկարգապահութեամբ դասավորված հողամասերը չէյին ուրախացնում ժողովրդի աչքը, իսկ այժմ ճիշտ պլանավոր-

1) Մոլոտով, Հողմածներ և ճառեր, էջ 223, Կուսհրատ, 1937 թ.:

ված, իրենց մեծությամբ դյուղատնտեսական պահանջներին համապատասխանող—նրանք անչափ զեղեցիկ տեսարան են ներկայացնում: Բայց ամեն բանից զեղեցիկը—այդ դաշտերում աշխատող ժողովուրդն է: Դեմքերի ուրախությունը, շարժումների վստահությունը, ինտելիգենտությունը, յերխասարդությունը վոչ միայն տարիքի, այլ և ժողովրդի զխտացության մեջ—ահա նկարչի վրձինին արժանի տեսարան:

Այն ծանր հողը, վորը ժողովուրդների շատ սերունդներին մըշտական չարչարողն է յեղել, այժմ դարձել է ուրախության աղբյուր, յերջանկության աղբյուր, նրա կոլտնտեսական աշխատավորների հրաշալի կյանքի աղբյուր: Առանց մեծ թվերով ծանրաբեռնելու, յես կասեմ միայն, վոր հումք—բամբակի արտադրությունը 1913 թվին կազմում էր 7,4 միլիոն ցենտներ, իսկ 1936 թվին՝ մոտ 24 միլիոն ցենտներ: Առանձին կոլտնտեսությունները, վորտեղ ստեղծագործական ենտուղիազմը զուգորդվում է բարձր տեխնիկայի և դյուղատնտեսական փորձառության հետ, ձեռք են բերում վոչ միայն առաջ չտեսնված հաջողություններ, այլև այնպիսի հաջողություններ, վորոնց վրա մենք էլ ենք զարմանում: Մի մտածեցե՛ք՝ մեկ հեկտարից ստանալ 100 ցենտներ բամբակ: Մեկ հեկտարի բամբակի ճյուղերի վրա դառնվում է 600 փուլի հումք—բամբակ: Մի՞թե այս ապացույց չէ այն բանի, վոր յերբեմնի ճնշված ժողովուրդը վերջապես ձեռք է բերել իր յերջանկությունը:

Բոլոր հանրապետություններում, բոլոր ազգային մարդերում դարգացել է արդյունաբերությունը, կառուցվում են Փարրիկաներ և գործարաններ, վորտեղ ոռոս ինժեներների, տեխնիկների և փորձառու բանվորների ոգնությամբ անեցվում են բանվորների ու տեխնիկական ինտելիգենցիայի ազգային կազմեր: Առանձնապես ուրախալի յե նշել, վոր այդ Փարրիկաների և գործարանների դազդյաճանքի մոտ կանգնում են ազգություններից հազարավոր կանայք, վորոնք միայն քսան տարի սրանից առաջ բառացիորեն զեռուս ստրիկոսիներ էյին՝ թե՛ վորպես աշխատավորուհի և թե՛ վորպես կին:

Մեծ ու բազմակողմանի յե ԽՍՀՄ ազգությունների ստեղծագործությունը: Իխտության մեջ, տեխնիկայի, զեղարվեստի ասպարեզում՝ ամենուրեք նկատվում է ձեռով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի աննախընթաց բարգավաճում: ԽՍՀՄ ազգությունների ստեղծագործությունն առա-

վելապես փայլուն կերպով յերևաց ժողովրդական յերգի մեջ, հսկայական քանակությամբ յերգեցիկ խմբերի, նվագախմբերի, ինժնագործ թատրոնական խմբակների կազմակերպման մեջ: Համարյա բոլոր ազգային հանրապետությունները ունեն իրենց պետական թատրոնները: Յես մանրամասն չեմ խոսի Ուկրաինայի մասին: Նրա կուլտուրան անցել է մոտավորապես նույնպիսի ուղի, ինչպես և ոռոս ժողովրդի կուլտուրան: Ուկրաինական ժողովուրդը շատ բան է կրել, ոռոս ժողովրդի հետ միասին նա պայքարել է ինժնակալության դեմ, ոռոս ժողովրդի հետ պարտություններ է կրել, հաղթություններ է տարել:

Նույնը պեռք է ասել և վրաց ժողովրդի մասին, վորը ոռոս ժողովրդի հետ ուսուսի տված պայքարել է ցարիզմի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ: Վրաց պրոլետարիատը պատվավոր տեղ է զբաղում ոռոսական հեղափոխական բանվորական շարժման մեջ: Վրացական կուլտուրան դառնվում է Յեվրոպայի առաջավոր յերկրների կուլտուրայի մակարդակի վրա: Խորհրդային իրավակարգը նոր սոցիալիստական բովանդակությամբ հարստացրեց այդ կուլտուրան և հանեց այն ե՛լ ավելի մեծ բարձունքների վրա:

Ղազախստանի, Ուզբեկստանի, Հայաստանի և մյուսների յերգերում, ազգային թատրոնների բեմադրություններում, յերաժըտության, ժողովրդական ստեղծագործության մեջ ժողովուրդները, ասես, խավարչոին բանտից դուրս պրծնելով դեպի ազատ յերկրի պայծառ արևի ճառագայթները, մեծ թափով յերևան են բերում իրենց տաղանդները, գովերգելով ազատ կյանքի բերկրանքը:

Մենք դառնում ենք, վոր Խորհրդային Միության սահմաններից դուրս, նույնիսկ ամենաառաջավոր մարդիկ, չեն զնահատել այդ մեծագույն պրոցեսի—ժողովուրդների յեղբայրության ստեղծման ամբողջ խորությունը: Իսկ չե՞ վոր այդ կատարվում է աշխարհում առաջին անգամ: Պատմության մեջ մենք չգիտենք է աշխարհում առաջին անգամ: Պատմության մեջ մենք չգիտենք և վոչ մի պետություն, վորտեղ այնպես, ինչպես Խորհրդային Միությունում, ազգությունների միջև զարգացած լինի յեղբայրությունն ու բարեկամությունը: Յեով զարմանալի բան է՝ սրանից քսան տարի առաջ անվստահությամբ էյին վերաբերվում դեպի այն ամենը, ինչ վոր ոռոսական էր, իսկ այժմ Խորհրդային Միության ազգություններն ազահորեն ոգտագործում են ոռոս ընկերների փորձը, ոռոսական արվեստը, զիտությունը և տեխնիկան:



Հակառակ Ֆաշիզմի, վորն ազգամիջյան ատելությունն և հրա-  
հրում, Խորհրդային Միութեան ազգություններն միջև մրցու-  
թյունն և տեղի ունենում: Ամեն մի ազգություն ձգտում և առաջին  
տեղը դրավել՝ բերքատուության, աշխատանքի արտադրողականու-  
թյան, Փարբիկաներում և դործարաններում կատարվող աշխա-  
տանքի եֆեկտիվութեան ասպարեզում: Ամեն մի ազգային թատ-  
րոն ուզում և առաջ քաշվել, առաջին տեղը դրավել և ցույց տալ  
իր առավելություններն ուրիշ թատրոնների հանդեպ: Սպորտի  
ազգային խմբերն ուզում են առաջինը լինել Փուտրոլի, տենիսի և  
այլ ասպարեզներում: Սակայն այս վոչ մի առնչությունն չունի  
բուրժուական կոնկուրենցիայի հետ: Այս մրցումը վոչ թե խոր-  
թացնում և, այլ հարազատեցնում և, վոչ թե անջատում և, այլ  
միացնում և, վոչ թե քանդում և, այլ ցեմենտապատում և Խոր-  
հրդային Միութեան ժողովուրդներին: Ամեն մի ժողովուրդը ու-  
զում և ԽՍՀՄ սոցիալիստական շինարարութեան մեջ պատվավոր  
տեղ դրավել: Ուզբեկստանի ամեն մի բանվոր կամ դեղագացի կա-  
սի, վոր ինքը վոչ միայն Ուզբեկստանի քաղաքացի չէ, այլ ամե-  
նամեծ հրճվանքով ասում և, վոր ինքը քաղաքացի չէ Խորհրդ-  
դային Միութեան, վորի մայրաքաղաքն և Մոսկվան:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Նյութական միջոցների և կուլտուրայի զարգացումն ազգա-  
յին փոքրամասնությունների մեջ տեղի չէ ունենում վոչ անջատ-  
ձևով—դա կատարվում և ամբողջ Միութեան ժողովուրդների, և  
առաջին հերթին ուղև ժողովրդի մեջ:

Մարդկանց գիտակցությունից ավելի ու ավելի հեռանում,  
ավանդությունների դիրկն և անցնում հին աշխարհն իր նախա-  
պաշարմունքներով, իր հետամնաց տեխնիկայով, անհատական  
աշխատանքով: Նոր, հասարակական, կազմակերպված աշխա-  
տանքում, վորտեղ լայնորեն կիրառվում և նոր տեխնիկան, աճում  
և նոր կուլտուրան, աճում են նոր մարդիկ, խորհրդային մարդիկ,  
գիտակից կառուցողներ: Կարելի չէ համարձակորեն ասել, վոր  
Խորհրդային Միութեան բնակչության հիմնական գործոն մասն  
իր ճնշող մեծամասնությամբ բաղկացած և խորհրդային նոր  
մարդկանցից: Այս հաստատվում և պարզ դատողությամբ. 20-  
տարի դոյություն ունի խորհրդային իրավակարգը, և այն մար-

դիկ, վորոնք խորհրդային իրավակարգի սկզբին 15 տարեկան  
եյին, ներկա մոմենտին 35 տարեկան են դարձել:

Անցած տարիները ինքնին նշանակալից տարիներ են: Այդ  
տարիները հսկայական լարվածություն էյին պահանջում մարդ-  
կանցից: Բավական և հիշել Խորհրդային պետութեան թեպետ  
կարճ, բայց խորը բովանդակությամբ լի և գունեղ պատմու-  
թյունը: Խորհրդային նկարիչներն անտարակույս կատեղծեն այս  
դարաշրջանին արժանի գործեր:

Մեր ստեղծագործութեան վերելքն այնպիսի առանձնահատ-  
կություններ ունի, վորոնց նմանը չկա վոչ մի ուրիշ յերկրում:  
Սկսենք թեկուզ այն բանից, վոր մեզ մոտ համարյա ամեն մի  
գործարանում, ամեն մի կոլտնտեսութեան և խորհտնտեսութեան  
մեջ, ամեն մի հիմնարկութեան մեջ և բնակավարձկոտայների զբա-  
լի մասում կան պատի թերթեր, ինքնակրթութեան, քաղաքագի-  
տություն ուսումնասիրելու խմբակներ, գեղարվեստի ինքնա-  
գործ խմբակներ, գրականութեան խմբակներ և այլն: Այդ աշ-  
խատանքի մեջ ներդրաված են տասնյակ միլիոնավոր մարդիկ:  
Միմիայն այդ փաստերն արդեն վկայում են խորհրդային ժողո-  
վրդի կուլտուրականութեան աճման մասին, վորովհետև խոսքը  
տասնյակ միլիոնավոր մարդկանց կուլտուրայի աճման մասին և:

Մի՞թե խորհրդային ժողովրդի կուլտուրայի չտեսնված աճ-  
ման ցուցանիշը չի հանդիսանում մեր յերկրում ստախանո-  
վյան շարժման զարգացումը, վորի մեջ գրված և բանվորների ա-  
պագա կուլտուր-տեխնիկական վերելքի կորիզը:

Մի՞թե Ստախանովի, Բուսիգինի, Սմետանինի, Դուսայ և  
Մարուսյա Վինոգրադովաների, Կրիվոնոսի, Դյուկանովի, Յու-  
սիմի, Մազայի—մեր ժողովրդական տնտեսութեան այդ նորա-  
բարների—անունները չեն վկայում խորհրդային ժողովրդի կուլ-  
տուրայի, քաղաքական գիտակցութեան աճման մասին: Այս վկա-  
յում և այն մասին, վոր բանվոր դասակարգի շերտերում ստեղծ-  
վում և հոյակապ արտադրողների ավանդարդ—մարդիկ, վո-  
րոնք «կատարելապես տիրապետել են իրենց գործի տեխնիկային  
և գիտեն տեխնիկայից քամել այն առավելագույնը, վոր կարելի  
չէ քամել նրանից»<sup>1)</sup>:

Ստախանովյան շարժումը գրավեց և կոլտնտեսային գյու-

1) Ի. Վ. Ստալին, ճառ՝ արտասանած ստախանովականների Համաթիւ-  
թեանական Առաջին խորհրդակցութեանը, հլ 11, Հակուսհրատ, 1935 թ.:

զացիութեանը: Ո՞ւմ հայտնի չեն դաշտերի պանծալի ստախանովականների՝ Մարիա Դեմչենկոյի, Պաշա Անդելինայի, Մարենա Դնատենկոյի, Պոլազուտինի, Ոսկինի, Դարյա Մեյնիկի, Մամլյաքատ Նախանգովայի, Պաշա Կովարդակի անունները: Կոլտնտեսականների մեջ մրցումը աճում է խորն ու լայնորեն: Խորհրդային գյուղի առաջավոր մարդիկ պայքարում են կոլտնտեսական դաշտերի բարձր բերքատվութունն ապահովելու համար, և մենք գյուղատնտեսութեան մեջ ունենք աշխատանքի բարձր արտադրողականութեան հիմնալի որինակներ, վորոնք բոլորովին անհնարին ելին անցյալում: Ջնջվում է քաղաքի և գյուղի միջև յեղած հին դարավոր հակադրութեանը: Կոլտնտեսային արտադրութեանը, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, քաղաքական-լուսավորական լայն միջոցառումները գյուղում պայմաններ են ստեղծում լիովին վոչնչացնելու այդ հակադրութեանը:

Հաճախ գանդատներ ենք լսում, վոր մեր գրականութունը թույլ է: Գուցե մեր գրականութունը թույլ է համեմատած այն հսկայական աճի հետ, վորը նկատվում է մարդկային գործունեյութեան մնացած բոլոր վոլորտներում: Բայց «մեր գրականութունը հանդիսանում է՝ բոլոր ժողովուրդների և յերկրների գրականութուններից ամենայերիտասարդը: Միևնույն ժամանակ նա հանդիսանում է ամենազաղափարական, ամենաառաջավոր և ամենահեղափոխական գրականութունը»<sup>1)</sup>: Այս գրականութունը խոսում է Խորհուրդների յերկրի ժողովուրդների սոցիալիստական աշխատանքի մասին, Խորհրդային Միութեան յերջանիկ կյանքի մասին: Նա ծառայում է սոցիալիստական շինարարութեան գործին: Մեր գրական յերկրի հերոսները—դրանք նոր կյանքի ակտիվ շինարարներն են՝ բանվորները, բանվորուհիները, կոլտնտեսականները, կուսակցականները, ինժեներները, կոմյերիտականները, պիոներները, տնտեսավարները, մեր յերկրի թեմատիկան—այդ մեր յերկրի ժողովուրդների ստեղծագործ գործունեյութունն է:

Մի՞թե այս բոլորը չի վկայում այն մասին, վոր ԽՍՀՄ դարձել է վոչ միայն առաջավոր արդյունաբերական յերկիր, վոչ միայն աշխարհում ամենախոշոր սոցիալիստական գյուղատնտես-

1) Ժղանով, Խորհրդային գրականութունը ամենազաղափարական և ամենաառաջավոր գրականութունն է աշխարհում, էջ 8, 1934 թ.:

սութեան յերկիր, այլ և առաջավոր սոցիալիստական կուլտուրայի յերկիր:

Բոլորին հայտնի յե, թե ինչպիսի հաջութեան ունեն միջազգային կոնգրեսներում և կոնկուրաներում մեր գիտնականները, դաշնակահարները, ջութակահարները, արտիստները, յերգիչները, պարողները, վազողները, լուդորդները, շախմատիստները:

Բարձրագույն արտահայտութունն այն բանի, վոր մեր կադրերը հաղթահարել են տեխնիկան, վոր մեր յերկիրն ամենոր ստեղծում է նորանոր խոշոր կազմակերպիչներ, մարտիկներ, ենտուզիստներ, հերոսներ, հանդիսանում են Խորհրդային Միութեան հպարտ բազեների՝ Չկալովի, Բայդուկովի, Բեյլյա-կովի, Գրոմովի, Դանիլինի, Յումաչեվի հերոսական թուիչները:

Իրավունք ունեն մեզ հարցնելու և կհարցնեն՝ ինչո՞վ բացատրել աշխատանքի արտադրողականութեան այսպիսի չտեսցալիստական աճը, խորհրդային ժողովուրդի կուլտուրայի աճը, ստեղծագործութեան ծաղկումը մեր յերկրում: Մենք կպատասխանենք ընկեր Ստալինի բառերով՝ «Կյանքն ավելի լավ է դարձել, ընկերներ: Կյանքն ավելի ուրախ է դարձել: Իսկ յերբ ուրախ ես ապրում, աշխատանքն հաջող է գնում: Դրանից եք ստացվում են արտադրական բարձր նորմաները: Այստեղից եք առաջ են գալիս աշխատանքի հերոսներն ու հերոսուհիները»<sup>1)</sup>:

### ԽՍՀՄ ՀԶՈՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ Ե

Մեծ է ու գեղեցիկ մեր հայրենիքը—աշխատավորների հարգատ մայրը դարձած միակ յերկիրն աշխարհում: Ասես թե պատմութունը հատուցեց նրանց հազարամյա աշխատանքները, նրանց կրած դժբախտութունները և տանջանքները ամբողջ անցյալի համար:

Մեր յերկիրը տարածված է սկսած Սառուցյալ ովկիանոսից՝ նրա կղզիներով և սառցակույտերով հանդերձ, վորտեղ բնութեան հետ պայքարում են Խորհրդային հերոսները, մինչև բարբեր հարավի—Սև ծովի ափերը, սկսած լեհական և լատվիական սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը:

Տերիտորիայի լայնածավալութունը նախորոշել է նաև մեր

1) Ի. Վ. Ստալին, ձառ՝ արտասանած ստախանովականների Համաթիութեանական Առաջին Խորհրդակցութեանը, էջ 15, Հայկուսհրատ, 1937 թ.:

Հողում յեղած հարստութիւնները բազմազանութիւնը: Հյուսիսը ծածկված է անտառներով, վորոնց վորակը հայտնի յե ամբողջ աշխարհին: Հյուսիսից դեպի հարավ և արեւմուտքից դեպի արեւելք, բոլոր ուղղութիւններով ձգվում են հաճարի և ցորենի անծայրածիր դաշտերը, վորոնք կարող են կերակրել հարյուր միլիոնավոր մարդկանց: Այդ դաշտերին միանում են մարդու ձեռքով մշակած ձյունանման բամբակի հարթավայրերը, թեյի պլանտացիաները, խաղողի այգիները և կոլտնտեսային հրաշալի պարտեզներում հասնում են մանդարին, նարինջ, կիտրոն—խորհրդային իշխանութեան որով մշակված պտուղներ:

Մեր գետերը, լճերը և մեր յերկիրը չըջապատող ծովերը լեփ-լեցուն են ձկների հսկայական պաշարով: Լայնածավալ դաշտերում և մարգագետիններում արածում են խոշոր և մանր յեղջուրավոր անասունների հոտեր: Մեր յերկրի ընդերքը հարուստ է յերկաթի հանքերով, քարածխով, նավթով, վոսկով, հանքային պարարտանյութերով և անսահման քանակութեամբ այլ ոգտակար հանքերով:

Տանյակ-հազարավոր կիլոմետրերի վրա ձգվում են յերկաթուղիների պողպատե ուղիները:

Մեր ծովերին ու ջրառատ գետերին խորհրդային մարդիկ միացրին ջրանցքներ, վորոնց վրայով հարավից դեպի հյուսիս, արեւմուտքից դեպի արեւելք և դեպի հետ ուղեւորվում են անհամար բեռներ—մարդու արտադրողական աշխատանքի արդյունքը:

Անտառները, ընդերքի հարստութիւնները, բանվորների և կոլտնտեսականների արտադրողական աշխատանքը, տեխնիկային տիրապետելը հնարավորութիւն տվին լայնորեն ծավալելու յերկրում ինդուստրիալ շինարարութիւնը: Ստեղծվել են հազարավոր ֆաբրիկաներ և գործարաններ, ելեկտրակայաններ: Մեր գետերը, ինչպիսիք են Դնեպրը, Վոլխովը, վորոնք անցյալում ոգնում էին միայն բեռների փոխադրմանը, այժմ տալիս են ահագին քանակութեամբ ելեկտրական էներգիա: Ստեղծված են աշխատանքի նոր ճյուղեր, վորոնք հին ցարական Ռուսաստանի ուժերից վեր էին: Վերստեղծված է մետաղագործական արդյունաբերութիւնը, վորը անհամեմատելի յե նախկինի հետ. կառուցված են ավտոմոբիլային և տրակտորային գործարաններ. ստեղծված է ավիացիոն արդյունաբերութիւն. արտա-

դրվում է սինթետիկ կաուչուկ, ստեղծված է քիմիական արդյունաբերութիւն, վորը տարեցտարի բարձրացնում է կոլտնտեսային դաշտերի համար անհրաժեշտ քիմիական պարարտանյութերի արտադրութիւնը: Այս ամենը, հին ցարական, ազրարապես աղքատ Ռուսաստանը, վորտեղ գերակշռում էր գյուղացիական պրիմիտիվ աշխատանքը, դարձրեց բարձր զարգացած ինդուստրիալ յերկիր, վորը կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն:

Հին ցարական Ռուսաստանը մտնում էր մեծ տերութիւնների կազմի մեջ: Այդ նրան չէր խանդարում նրանց հարկատուն լինելու: Սակայն, Ռուսաստանից ահագին շահույթներ ստացող յերկրներն էլ պարտքի տակ չէին մնում: Յարիգմի և ռուս տիրող դասակարգի համար ծանր բոլակներին այդ յերկրները նրանց ոգնութեան էլին գալիս իրենց դրամական պարկով: Այդպես յեղավ 1905 թվին, յերբ թվում էր՝ ահա վորտեղ վոր է հեղափոխական բանվոր դասակարգը և գյուղացիութիւնը մահացու հարված կհասցնեն ցարիզմին: Այդ ժամանակ Ֆրանսական բանկիրները փրկութեան հասան իրենց «կլիենտուրային»:

Կապիտալիստական աշխարհի պարագլուխները մեզ, Խորհրդային Միութեանը, չեն սիրում, իսկ յեթե խոճով ասենք, ատում են չար ատելութեամբ: Ասենք՝ ատելու պատճառներ կան: Առաջինը, մենք զրկեցինք նրանց մեր բանվորներին շահագործելու, մեր հողի ընդերքն ոգտագործելու հնարավորութիւնից. յերկրորդը, և այդ գլխավորն է, մենք տապալեցինք մեր կապիտալիստներին: Մեզ մոտ իշխանութեան գլուխ են կանգնած բանվոր դասակարգն ու գյուղացիութիւնը—սրանով իսկ մենք աշխարհի բոլոր աշխատավորներին որինակ ցույց տվինք, վոր աշխատավորները կարող են յուրազնալ առանց կապիտալիստների: Ահա այս բանը կապիտալիստները վոչ մի կերպ ներել չեն կարողանում: Սրանումն է հենց նրանց ատելութեան հիմքը և միևնույն ժամանակ նրանց անասնական սարսափը Խորհրդային Միութեան հանդեպ:

Ավագակային ֆինանսական կապիտալի զինակիցները—ֆալիստները, մոլեգնորեն տարված են մի մտքով—կործանել Խորհրդային Միութեանը: Նրանց հրապուրում են մեր յերկրի հսկայական տարածութիւնները, նրա մշակված դաշտերը, նորակառույց հիւնարի ֆաբրիկաներն ու գործարանները. նրանց գրավում են մեր ընդերքի հարստութիւններն ու մեր անտառ-

ները. նրանց գրավում են մեր աշխատավորների արտադրողական աշխատանքով ստեղծված հարստութիւնները: Սոված շնորհայեցիկ նման շրջում են այդ գիշատիչները մեր սահմանների յերկայնութեամբ, ձգտելով մի սողանց: դտնել մեր տերիտորիան մտնելու համար: Բայց ամուր են մեր սահմանները: Նրանք պահպանվում են մեր փառապանծ Կարմիր Բանակի մարտիկները կողմից: Այս կամ այն տեղում պատահամար մեր սահմանն անցած այդ գիշատիչների առանձին փորձերը նրանց համար վողբալի վախճան ելին ունենում: Մեր մարտիկները անողորմաբար հաշիվ ելին տեսնում:

Մեր բանակը, ժողովրդական բանակը, աչալըժորեն պահանում է Խորհրդային յերկիրը, նրա խաղաղ սոցիալիստական աշխատանքը: Յեւ ուրիշ կերպ չէր ել կարող լինել: Չե՞ վոր մեր բանակը—այդ՝ կոլտնտեսային գյուղացիութեան, բանվոր դասակարգի և ԽՍՀՄ բոլոր ազնիվ քաղաքացիների լավագույն զավակներն են: Աշխարհում և վոչ մի տեղ չկա այսպիսի կապ—հարազատութիւն ժողովրդի և բանակի միջև: Մեր Կարմիր Բանակը—դա ժողովրդի լավագույն մասն է: Նա ժողովրդի հետ միասին հաղթահարում է ճանապարհին հանդիպող խոչընդոտները, նա ժողովրդի հետ միասին հաղթահարում է բնութեան ուժերը, նա ժողովրդի հետ միասին նվաճում է կուլտուրա, լավագույն ապագա: Նա ժողովրդի հետ միասին, վորպես նրա անկապտելի մասը, անձնվիրաբար պաշտպանում է և կպաշտպանի Խորհրդային Միութեան ամբողջականութիւնն ու անձեռնմխելիութիւնը, մեր յերկրում բնակվող բոլոր ժողովուրդների յերջանկութիւնը:

Մեր հայրենիքը սքանչելի յէ: ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներն անսահմանորեն սիրում են նրան և չեն կարող չսիրել: Չե՞ վոր նա յերկրագնդի միակ մասն է, վորտեղ աշխատավորական մասսաները, բանվոր դասակարգը, գյուղացիութիւնն իրենց յերջանկութեան տերերն են հանդիսանում. չե՞ վոր նա միակ յերկիրն է, վորտեղ իշխանութեան գլուխ են կանգնած բանվորներն ու գյուղացիները: Կապիտալիստական յերկրներում պրոլետարատը հայրենիք չունի: Այնտեղ կապիտալիստների հայրենիքն է: Խորհրդային Միութեանը—դա աշխատավորների հայրենիքն է: Միլիոնավոր մարդիկ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեան որից իվեր գտել են իրենց իսկական հայրենիքը, իրենց կրծքով են նրան պաշտպանել և պաշտպանում են թշնամիների

դեմ մղվող կռիւմ: Ի՞նչպես չսիրենք մենք նրան, ի՞նչպես չկուզենք մենք նրա համար:

Խորհրդային մարդկանց հայրենասիրութիւնն արտահայտվում է սիրով ու համերաշխ մշակված դաշտերով, հոյակապ կառուցված ֆարքիկաներով և գործարաններով, յերկրի հասարակական կյանքին լայն մասսաների ցույց տված ակտիվ մասնակցութեամբ, իրենց կուլտուրականութիւնը բարձրացնելու ձգտումով: Այս հայրենասիրութիւնը յերևան է դալիս ամեն մի կարմիր—բանակայինի գիտակցութեան մեջ, վոր նրա պահպանութեան տակ մեր հայրենիքը անմատչելի յէ Խորհրդային Միութեան բոլոր թշնամիների համար: Դրա համար ել ժողովուրդը, փոքրից մինչև մեծը, սրտատուչ հոգատարութիւն և սեր է ցուցաբերում դեպի իր Կարմիր Բանակը:

Բանվոր դասակարգը և գյուղացիութիւնը իշխանութիւնը վերցրին հոչստված յերկրում, վորտեղ գերակշռում եր ավերված գյուղացիութիւնը, քանդված ֆարքիկաներն ու գործարանները: Յերկիրը լեցուն եր ժողովրդի թշնամիներով, վորոնք պատրաստ ելին մի արծաթով վաճառելու իրենց հայրենիքը: Արևելքից և Արևմուտքից գալիս ելին նրա վրա ստարերկրյա գործերը, վորոնք ծարավի ելին համեղ պատառը պոկելուն:

Քսան տարվա ընթացքում ԽՍՀՄ—ի ժողովուրդները շատ բան են արել: Նրա բոլոր անկյունները մաքրված են ինտերվենտներից, յերկիրը հսկայական չափով աճում է նյութապես և կուլտուրապես, վորով և ամբանում է նրա ռազմական հզորութիւնը: Խորհրդային Միութեան ձայնը միջազգային հարաբերութիւնների վոլիմպոսում ավելի ու ավելի բարձր է հնչում: Այդ ձայնին ավելի ու ավելի ուշագիւր ականջ են դնում վոչ միայն ԽՍՀՄ թշնամիներն, այլև բարեկամները — աշխատավոր մասսաները:

ԽՍՀՄ բանվորների և գյուղացիների մեծ յերկիրն է:

ԿՈՍՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՎԱՆԳԱՐԴՆ Ե

Հարյուր հազարավոր մարդիկ հարց են տալիս իրենց՝ վո՞րտեղից են վերցվում Խորհրդային Միութեան ժողովուրդների ներքին ուժերը: Ի՞նչն է նրանց հզոր աճման դրդապատճառը:

Այդ հարցի պատասխանը շատ պարզ է, ամեն վոք կարող է այն գտնել. դա կոմունիստական կուսակցութիւնն է: Նրա ղեկավարութեան ներքո քառասուն տարուց ավելի պայքարում է մեր յերկրի բանվոր դասակարգը, նրա ղեկավարութեամբ բանվորներն ու գյուղացիներն իշխանութիւն ձեռք բերին, նրա ղեկավարութեամբ մենք մեր յերկրում հաղթեցինք ցարիզմին ու կապիտալիզմին և նրա ղեկավարութեամբ մենք կառուցեցինք սոցիալիզմ: Այն բոլորն, ինչ վոր կատարվում է Խորհրդային Միութեան մեջ, դա կոմունիստական կուսակցութեան ծրագրի իրագործումն է: Կոմունիզմը վոգեւորում և վարակում է մարդկանց մեծագույն պաթոսով, կոմունիզմը վոգեւոյնում է Ֆիզիկական հասարակ աշխատանքը, լցնելով այն խորը դադափարական բովանդակութեամբ:

Բանվոր դասակարգի և գյուղացիութեան լավագույն գավակները, աշխատավորների ամենաակտիվ մասը մտնում է կոմունիստական կուսակցութեան մեջ, մտնում է նրա համար, վորպեսզի պայքարի բանվոր դասակարգի և գյուղացիութեան գործի համար: Յեւ ուրիշ կերպ չի ել կարող լինել:

Կոմունիստական կուսակցութիւնը չունի իր սպեցիֆիկ շահերը, չունի իր հատուկ նպատակները: Նրա շահերը, նրա նպատակները—դա բանվոր դասակարգի և կոլտետեսային գյուղացիութեան շահերն ու նպատակներն են: Կոմունիստական կուսակցութիւնը ձեւակերպում և վորոշում է այն նպատակները, վորոնց պետք է ձգտի ժողովուրդը, կազմակերպում և կենտրոնացնում է այն միջոցներն ու հնարավորութիւնները, վորոնցով կարելի յի հասնել այդ նպատակների իրագործմանը, ղեկավարում է նշված խնդիրների կատարումը:

Կոմունիստական կուսակցութիւնը սերտորեն կապված է մասսաների հետ—և չի ել կարող կապված չլինել նրանց հետ: Կոմունիստական կուսակցութիւնը ձգտում է դրված նպատակներն իրագործելու միայն մասսաների հետ միասին, արտահայտելով նրանց շահերը, կազմակերպելով նրանց, պարզաբանելով և ուղղելով նրանց հասնելու այդ նպատակներին: Մասսաների հետ կուսակցութեան սերտ կապի կորուստը կլինի նաև նրա կոմունիստական բովանդակութեան կորուստ:

Աշխատավոր մասսաները և կոմունիստական կուսակցութիւնը—այդ մի ամբողջութիւն է: Իզուր չէ, վոր Լենինի հիշատակը վոչ միայն ապրում է, այլ ավելի ու ավելի տեղեր է

գրավում մարդկանց գիտակցութեան մեջ: Իզուր չէ, վոր Ստալինի անունը միլիոնավոր մարդկանց սրտերում հիացմունք, ուրախութեան և մտերմութեան զգացմունք է առաջ բերում: Ստալինի հետ, վորպես կոմունիստական դադափարների արտահայտիչ, կապված է ուսական սոցիալիստական մեծ հեղափոխութեան առաջնութեաց շարժման ամբողջ պատմութիւնը, նրա հետ են կապված ակնկալութիւնները, հույսերը և Խորհրդային Միութեան ժողովուրդական մասսաների արդեն ձեռք բերած հաջողութիւնները: Վորպես արձագանգ այդ համաժողովուրդական սիրո, հնչում են ընկեր Ստալինի խոսքերը՝ «Կարող եք շտարակուսել, ընկերներ, վոր յես պատրաստ եմ առաջիկայում ել բանվոր դասակարգի գործին, պրոլետարական հեղափոխութեան գործին և համաշխարհային կոմունիզմի գործին նվիրելու իմ բոլոր ուժերը, իմ բոլոր ընդունակութիւնները, և յեթէ կարիք լինի, իմ ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ»<sup>1)</sup>:

Կոմունիստական կուսակցութիւնը ջահն է հանդիսանում պատմական այն ուղու, վորով ընթանում են ԽՍՀՄ ժողովուրդները: Կոմունիստական կուսակցութիւնը ազնվացնում է, վարակում է ենտուզիզմով, առաջացնելով մասսայական հերոսութիւն և նրա գավակների մեջ բացառիկ սեր դեպի սոցիալիստական հայրենիքը:

Խորհրդային Միութեան ժողովուրդները կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեան տակ պայքարում էլին իրենց լավագույն ապագայի համար: Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեան տակ նրանք այժմ հաղթանակից հաղթանակ են գնում: Ընկեր Ստալինի ղեկավարութեան տակ Խորհրդային Միութեան ժողովուրդները կնվաճեն կոմունիզմը:

\* \* \*

Յերբ հայացք ես դցում անցած ուղու վրա, վորի սկիզբն էր Մեծ սոցիալիստական հեղափոխութիւնը, ակամա քեզ համակում է հիացմունքի, զարմանքի զգացմունք աշխատավոր մասսաների ստեղծագործական ուժերի հանդեպ, նրանց հերոսութեան հանդեպ, մեր կուսակցութեան իրեւանների համար մղվող պայքարում նրանց ցուցաբերած անսահման նվիրվածու-

1) «Պրավդա», 22 դեկտեմբերի 1929 թ.:

Յայն հանդեպ: Այդ ստեղծագործական ուժերն ավելի փայլուն կերպով արտացոլված են Խորհուրդների VIII Համաժողովին հանդիսանալիս Արտակարգ համագումարում ընդունված ԽՍՀՄ Սահմանադրութայն մեջ: Ժողովուրդն այն անվանում է մեծ Ստալինյան սահմանադրություն:

Սահմանադրությունն իր հակիրճ ձևակերպումներում աշխատավոր մասսաների վրա յե հաստատել, իրավաբանորեն ամրացրել այն, ինչ վոր նրանք ձեռք են բերել ու նվաճել են:

Ստալինյան սահմանադրութայն ստեղծումն ու ընդունումը պատմական մեծ քայլ է դեպի առաջ ԽՍՀՄ Ժողովուրդների զարգացման գործում, Ժողովրդապետութայն զարգացման գործում: Մինչդեռ կապիտալիզմի յերկրներում կործանվում են դեմոկրատիայի առանց այն ել խղճուկ ձևերը, իսկ մի շարք յերկրներում դեմոկրատիան բոլորովին ճնշված է և փոխարինված է Փաշիզմով, Խորհրդային Միությունը անց է կացնում ընտրական սիստեմի հետագան դեմոկրատիզացիան, ներգրավելով բանվորներին և գյուղացիներին պետական կառավարչութայն մեջ, ընդարձակելով բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան և դիկտատուրան վերածելով «հասարակութայն պետական ղեկավարման ավելի ճկուն, հետևաբար՝ ավելի հզոր սիստեմի...»<sup>1)</sup>:

Ամբողջ խորհրդային իշխանությունը վերից վար, սկսած ԽՍՀՄ Գերագույն Խորհրդից մինչև գյուղական խորհուրդը, ընտրվում է ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Այդ նշանակում է — Ժողովրդական վերահսկողութայն ուժեղացումը պետական որդանների աշխատանքի վերաբերմամբ: Այդ նշանակում է, վոր իշխանութայն ամեն մի կրողին հետևելու յեն նրա հազարավոր ընտրողները: Այդ նշանակում է, վոր իշխանութայն այս կամ այն ներկայացուցչի չարարկությունների, սխալների և աշխատել չիմանալու համար ընտրողը չի կարող ներքուստ բարոյական իր պատանխանատվությունը չզգալ նրա համար: Այդ, իր հերթին, Ժողովրդական մասսաների մեջ զարգացնում և ամրապնդում է պետականութայն գիտակցությունը, պատասխանատվություն Խորհրդային սոցիալիստական պետութայն առաջադիմութայն և ամբողջականութայն համար:

1) Ի. Վ. Ստալին, ԽՍՀ Միութայն Սահմանադրութայն նախագծի մասին, էջ 38, Հայկուսհրատ, 1936 թ.:

ԽՍՀՄ Սահմանադրությունը լայնորեն ծավալում է խորհրդային դեմոկրատիան: Նա չի սահմանափակվում քաղաքացու իրավունքները հայտարարելով, այլ ապահովում է այն՝ որինական կարգով: «Ուստի հասկանալի յե, վոր նոր Սահմանադրութայն նախագծի դեմոկրատիզմը հանդիսանում է վոչ «սովորական», «ընդհանուրի կողմից ձանաչված» դեմոկրատիզմ ընդհանրապես, այլ «սոցիալիստական» դեմոկրատիզմ»<sup>1)</sup>:

Սահմանադրությունը դեմոկրատականացնում է նաև խորհրդային դատարանը, վորն ընտրվում է ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Խորհրդային իշխանությունը Ժողովրդի ձեռքն է հանձնում պետական բացառիկ կարևորություն ունեցող մի ինստիտուտ, վորն աշխատավորների ճնշման գործիք է ծառայում կապիտալի բոլոր յերկրներում: Այսպիսի բան կարող է անել միայն Ժողովրդական իշխանությունը: Այս փաստի մեջ պարզորեն արտացոլում է խորհրդային իրավակարգի ամբողջ սիստեմը:

Շատ ջանք է գործադրել Ժողովուրդն իր հողը ստարերկրյա ինտելիկենտների ձեռքից խլելու համար, շատ արյուն է թափվել ցարական վոհմակի դեմ մղված կռվում: Բանվորների, գյուղացիների և խորհրդային բոլոր ազնիվ քաղաքացիների կողմից մեծ ուժ է դրված Խորհրդային պետութայն կառուցման վրա, արդյունաբերութայն և գյուղատնտեսութայն զարգացման վրա, Խորհրդային Միութայն Ժողովուրդների կուլտուրայի զարգացման վրա:

Վորպես արդյունք հերոսաբար անցած այս ուղու՝ Ժողովուրդն ունի «պատմական փաստաթուղթ, վորը պարզ ու սեղմ, համարյա արձանագրական վոճով, խոսում է ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի տարած հաղթութայն մասին, կապիտալիստական ստրկությունից ԽՍՀՄ աշխատավորների ազատագրման փաստերի մասին, ԽՍՀՄ մեջ ծավալուն, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթութայն փաստերի մասին...»


Վորպես արդյունք պայքարի ու զրկանքների անցած ուղու՝ հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Սահմանադրությունը, վորը խոսում է մեր հաղթությունների պտուղների մասին: Հաճելի և բերկրալի յե գիտենալ, թե ինչի համար են

1) Ստալին, ԽՍՀ Միութայն Սահմանադրութայն նախագծի մասին, էջ 23, Հայկուսհրատ, 1936 թ.:

մարտնչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթութիւնը: Հաճելի և բերկրալի յե գիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդշուն չի անցել, վոր այդ իր արդշունքներն և տվել: Դա հոգեպես զինում և մեր բանվոր դասակարգին, մեր գյուղացիութեանը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Դա առաջ և շարժում և բարձրացնում և որինական հպարտութեան զգացմունքը: Դա ամրապնդում և հավատը դեպի մեր ուժերը և մոբիլիզացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթութիւններ նվաճելու համար»<sup>1)</sup>:

Ահա թե ինչու համար աշխատավոր մասսաներին մոտ և, թանգ և սիրելի յե սոցիալիստական հայրենիքը: Ահա թե ինչու աշխատավոր մասսաները խանդավառ սիրով են սիրում իրենց առաջնորդ ընկեր Ստալինին:

Կուսակցութեան և նրա առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարութեամբ համարձակ քայլերով առաջ, դեպի կոմունիզմ:




1) Ստալին, ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան նախագծի մասին, էջ 63, Հայկուսհրատ, 1936 թ.:

Ինչ ձեռք բերին ԽՍՀՄ բանվորները . . . . .	5
Կուսակցական գյուղացիութիւնը խորհրդային իշխանութեան հավատարիմ հենարանն է . . . . .	14
Խորհրդային ինտելիգենցիան . . . . .	21
ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամութեան յերկիր է . . . . .	24
Ժողովրդական ստեղծագործութեան վերելքը . . . . .	30
ԽՍՀՄ հզոր տերութիւնն է . . . . .	33
Կոմունիստական կուսակցութիւնը աշխատավորների ավանգարդն է . . . . .	37


Թարգմ. Ա. Ղարազյուլյան  
 Թարգմանութիւնը խմբագրել և Բ. Ն. Դավթյան  
 Տեխն խմբագիր Ս. Խաչատրյան  
 Սրբագրիչ Վ. Զիդեշյան  
 Կոմպոզիտոր սրբագրիչ Լ. Արսլյան

Գլավլիտի լիազոր՝ Կ-3252, հրատ. № 520  
 Պատվեր № 235, տիրաժ 20.000  
 Հանձնված և արտադրութեան 14/XII 1937 թ.  
 Ստորագրված և տպագրելու 7/1 1938 թ.  
 Գին՝ 45 Կ.

Հայկուսհրատի տպարան, Յերեւան, Ալավերդյան № 71







30

ՀՀ Ազգային գրադարան



NL0977584

19 ЯНВ 1938

№ 45 4

13

11

28473

**М. И. КАЛИНИН**  
**ЧТО ДАЛА**  
**СОВЕТСКАЯ ВЛАСТЬ**  
**ТРУДЯЩИМСЯ**

Ариергардад, Ереван, 1938